



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳԼԱՊԸ ԵՒ

ՀԱՒԱՏԱՑԵԱԼԸ

Գ. Գ. Խ.

Հոգ. Կեանք

ՄԵՂԲԸ

Ազատ Թարգմ. Ն. Մ.

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Թրգ. Ի. Յ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ԻՆՉՊԷՍ ՂՈՎՏԻ ՕՐԵՐԸ

ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆ

Ս. Գրական ուսումնասիրութիւն

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸ

Զ. Բ. ՊՈՒՏԱԳԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

Կենսագրական

ԿՈՄՍ ՅԻՆՑԻՆՈՐՅ

X X X

Խանկանց սիւնակ

ՍՈՒՐԲ ԳԻՐԲԸ ԿԱՐԴԱ

Զանազան լուրեր

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերեր Թէեւ Ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնածերերն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, ուստի ճշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ ջնանջնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերեր երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարսէլի մէջ: Հայերէնը յունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ. ԲՐՕՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ Եւ Պատ. ՍԱՄՈՒԷԼ ՊԱԳՅԱԼԵԱՆ

Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ Թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐի համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

ԲԱՆԲԵՐի բաժանորդագրուածիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք կամ 80 Սէնթ

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք կամ 40 Սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք
կամ 1 Տօլար եւ 10 Սէնթ

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆԻ, իսկ զրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Արձնացի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ Թէ
Անոր Գանգիստը մանկու խոստումնաբէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Երբ. Ժ. 37

Ը. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1932

ԹԻԻ 10

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ ԵՒ ՀԱՒԱՏԱՑԵԱԼԸ

Աշակերտները երբ զԱնիկա տեսան, Որ ծովուն
վրայ կը քալէր, խռովեցան եւ ըսին թէ աչքի երե-
ւոյթ բան մըն է, ու վախերնէն կանչուեցան:
Եւ շուտ մը Յիսուս խօսեցաւ անոնց ու ըսաւ, քաջ
եղէք, Ես եմ, մի վախճաք: Մատթ. ԺԴ. 26, 27

Ներկայիս աշխարհ մէջն է տնտեսական սոս-
կալի տագնապի մը: Ուր որ երթանք ամենէն
շատ մէկ բան կը լսենք, քրի՛վ, ճգնաժամ: Մօ-
տաւորաբար 20 միլիոնի կը հասնի անգործներու
թիւը: Հարկ է միայն մի քանի վայրկեան խոր-
հիլ՝ ըմբռնելու համար այն սրտաճմլիկ թշուա-
ռութիւնը որ կեցած է այդ անարկու թիւին ե-
տեւը: Քանի՜ սովալլուկ ստամոքսներ, քանի՜
կիսամերկ մարմիններ և քանի՜ յուսահատ, վըշ-
տալից սրտեր:

Աշխարհ մէջն է նաեւ քաղաքական անօրի-
նակ տագնապի մը: Տարիներէ ի վեր Ժընեւի,
Լօզանի եւ ուրիշ քաղաքներու մէջ վեհաժողով-
ներ իրարու կը յաջորդեն՝ ազգերու խաղաղու-
թիւն տալու զիտումով, այսու հանդերձ մենք
նստած ենք զեռ ոռմբերով լեցուած տակառի
մը վրայ, որ կրնայ պայթիլ ամէն մէկ վայրկեան:

Այս կացութիւնը սարսափի մատնած է բոլոր
խոհուն մարդիկ, ոչ պակաս նաեւ մեզ հաւատաց-
եալներս: Մեր խաղաղութիւնն ալ վրդովուած է,
մենք ալ յաճախ սրտմաշուք հոգին անձնատուր
կ'ըլլանք, ըսելով՝ «Ի՛նչ պիտի ուտենք, կամ
ի՛նչ պիտի խմենք, կամ ի՛նչ պիտի հագնինք»
(Մատթ. 2. 31): Զենք խորհիր թէ այդպիսի հո-
գերը բաժինն են անունով ու սրտով հեթանոս-
ներու, որոնք երկրպագութիւն կ'ընեն մունջ
կուռքերու, փայտէ ու մետաղեայ արձանի մը եւ
կամ զրամին, զիտութեան եւ մարդկային կարո-
ղութեան ու արժանիքին: Զենք խորհիր թէ

մենք իբր երկրպագութիւնը կենդանի Աստուծոյն,
ազատ ըլլալու ենք այդպիսի մտատանջութիւն-
ներէ՝ յիշելով երկու ինքնայայտ ճշմարտութիւն-
ներ.—

Առաջին՝ մեր Աստուածը ամենակարող է:
Ան Որ կրցաւ Իսրայէլը անապատին մէջ քառա-
սուն տարի մանանայով կերակրել, եւ իր Որ-
դւոյն ձեռքով հինգ հազար մարդիկ կշտացնել՝
միմիայն հինգ նկանակով եւ երկու ձուկով, չի՞
կրնար մեզ ալ կերակրել ունէ կերպով մը: Իրեն
սեփականութիւնը չե՞ն դաշտին ամբողջ հունձ-
քը, զոմերու բոլոր ոչխարներն ու արջառները,
լեռներու բոլոր դանձերը և ատոնցմէ աւելի՜ ամ-
բողջ տիեզերքը: Ան՝ որ ծովուն ու հովուն սաս-
տեց ու անոնք լոցին, չկրնա՞ր քաղաքական
ու տնտեսական ճգնաժամին այնպիսի ընթացք
մը տալ, որպէսզի ան մեր յաւիտենական փըր-
կութեան ծառայէ:

Երկրորդ՝ Ամենակարողը մեր Հայրն է՝ մեր
Փրկչին շնորհիւ: Երբ մենք զեռ մեղաւոր էինք
ու իր թշնամիները՝ Անիկա իր Միածին Որդին
մեզի համար խաչի տառապանքին մատնեց, Ա-
նոր քաւչական արիւնովը մեզ իրեն հետ հաշ-
տեցուց ու իր որդիներն ու ժառանգներն ըրաւ,
ուստի ալ ինչպէ՞ս անոր հետ ամէն բաները մե-
զի չպարզեւեր: (Հռ. Ե. 8-10, Ը. 17, 32, Ա. Յովհ.
Գ. 1): Քանի որ Ան իր փառաց թաղը, սիրոյն ա-
մենէն վսեմ առարկան, իր էութեան բուն պատ-
կերը մեզի համար զոհեց, երբ մենք զեռ իր հա-
կառակորդներն էինք, ալ ինչպէ՞ս կրնայ զրկել
մեզ երկրորդական բարիքներէ հիմա, երբ մենք
իր գաւազներն ենք: Կրնա՞յ մեզի հացին տեղը
քար, ձուկին տեղը օձ եւ հաւկիթին տեղը կա-
րիճ տալ: Ո՛չ երբեք:

Կենդանի հաւատք Աստուծոյ ամենակարողութեան ու հայրական սիրոյն վրայ, ահա միջոցը ազատելու մեր ուսերը ճշունմէ եւ սիրտերը վախէ այս ճգնաժամի օրերուն եւ ըսելու մեր հոգերու լերան, «Ելիր ու ծովը ինկիր»:

Առանց այդ հաւատքին՝ մեր շուրջը ամէն պատահարի մէջ միայն «Աչքի երեւոյթ բան», դժոխային էակներ պիտի տեսնենք եւ աշակերտներուն նման պիտի սարսափինք, յուսահատինք ու կանչուրուտենք: Բայց երբ զինուած ենք այդ վսեմ հաւատքով՝ ամէն տեղ մեր Հօրը մատը պիտի նշմարենք:

Այս էր դիրքը մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի. Ան կը հաւատար թէ առանց Իր Հօր հրամանին Իր գլխուն մէկ մազն իսկ չկորսուիր. կը հաւատար թէ փարիսեցիներն ու քահանայապետները եւ Պիղատոս ու Յուդա՝ իրենց բոլոր չարամտութիւնով հանդերձ՝ միայն զայն պիտի գործադրէին ինչ որ Իր Աստուածը ծրագրած էր ի յաւիտեանից: Ուստի երբեք չէր վախնար եւ նոյնիսկ Իր մահէն մի քանի ժամ առաջ կրցաւ աշակերտները խրախուսել ըսելով, «Քաջասիրտ եղէք, ես աշխարհի յաղթեցի»:

Այսպէս կը հաւատար նաեւ Յովսէփ՝ Յիսուսէ մօտաւորապէս երկու հազար տարի առաջ. նա իր եղբայրներուն անգութ եւ դաւաճան արարքին ետեւ Աստուծոյ ձեռքը տեսաւ եւ ըսաւ, «Մի խորհիք թէ դուք զիս ծախեցիք, Աստուած զիս ձեր առջեւն զրկեց, մեզ բոլորս ապրեցնելու համար»: Քանի որ այս հաւատքով կ'ապրէր, օրհնուեցաւ եւ իր Տէրը փառաւորեց կենաց ամէն վիճակին մէջն ալ. — գերութեան մէջ, բանտի մէջ եւ արքունական պալատին մէջ:

Այս հաւատքով ապրեցան բոլոր առաքեալներն ալ, մանաւանդ Պօղոս. ան ամենէն մեծ մարտիրոսներէն մին է, անոր կրած տառապանքին գոնէ մէկ մասը ըմբռնելու համար կ'արժէ կարգալ Բ. Կոր. ԺԱ. 23-29: Բայց հակառակ այդ բոլոր չարչարանքներուն՝ կը գրէ անիկա, «Ուրախ եմ ձեզի համար կրած չարչարանքներուս համար»: «Ամէն բաները բարիի գործակից են»:

Արդ՝ մենք ալ իբր ճշմարիտ քրիստոնեաներ, հարկ է որ զինուինք նոյն կենդանի հաւատքովը: Այո, սոսկալի է տնտեսական, քաղաքական, ու բարոյական ճգնաժամը, որուն մէջէն մենք կ'անցնինք ներկայիս. այո, Քրիստոսի թշնամիներէն շատեր այս բոլոր դժբաղդութեանց պատասխանատու կը նկատեն հաւատացեալներու փոքր խումբը եւ պատրաստ են զայն կլլելու: Այո, մենք կը գտնուինք ալիկոցեալ ծովու մը վրայ, ուր հետզհետէ աւելի վայրագ կը զոռան հովերը եւ աւելի կատաղի թափով կը բաղխին կոհակները մեր մակոյկին: Բայց վեր վերցնէք աչքերնիդ եւ քննե՛ք մը հեռուն նայեցէ՛ք. Մէկը կուգայ շուրերուն վրայէն քալելով: Մի վախնաք, ուրուական մը չէ ան եւ չգար մեզ դէպի անդունդ քշելու դիտումով: Տեսէ՛ք, ժպիտ կայ Անոր քաղցր դէմքին վրայ եւ խրախոյս՝ աչքերուն մէջ: Մեր Փրկչին է Ան, հեռուէն տեսած է որ մենք կը տազնապինք թի քաշելու ատեն (Մարկ. 9. 47, 48). տեսած է որ մեր անգործութիւնը ու մերինները ապրեցնելու հոգը, մեր երկարամեայ հիւանդութիւնը, անհաւատներէն կրած մեր նախատինքը, մեր տարակոյսները եւ. եւն. կը փութորկեն մեր ամբողջ էութիւնը եւ մենք ի զո՛ւր կը պայքարինք անոնց դէմ: Ուստի Ինքը մեզի օգնութեան կուգայ. կուգայ Իր ուրախութեամբը այնպէս լեցնելու մեր սիրտը որ վերոյիշեալ բոլոր նեղութիւններն մէյմէկ օրհնութեան միջոց ըլլան եւ անոնց մէջէն իսկ Իր փառքը յայտնուի: Կուգայ, անոնց միջոցաւ լուծելու մեր հոգին կաշկանդող աշխարհային ու մարմնաւոր կապերը, մեր սէրը ամբողջովին Իր վրայ կեդրոնացնելու: Կուգայ, դուրսի թերահաւատներուն ալ ցուցնելու թէ թէեւ Իր զաւակներն ալ կը չարչարուին ուրիշ մարդոց չափ եւ անոնցմէ աւելի ալ, բայց Իր օգնութիւնովը անոնք չեն ընկճիր իրենց տառապանքէն, ընդհակառակն անոր մէջ աւելի կը զտուին ու անկէ զուրս կու գան իբր մաքուր ոսկի: Վերջապէս, կուգայ Իր ներկայութիւնով այնպէս լեցնելու մեր սիրտը որ կրնանք երկինքը երկրի վրայ վայելել գոնէ փոքրը չափով մը՝ հակառակ մեր շուրջը տիրող բոլոր փութորկումներուն ու խռովութիւններուն:

Ահա այս տեսակէտով դիտելու է հաւատացեալը տնտեսական տազնապալ. անոր ետեւն ալ կեցած է երկնաւոր Հայրը եւ կ'ուզէ անոր միջոցաւ աւելի կատարելագործել մեր ներքին մարդը եւ Իր պատկերին վերածել: Ուստի երբեք չյուսահատինք, աշխարհի մարդոց ցուցնենք թէ մենք այս նեղութեան օրերուն ալ ունինք այնպիսի խաղաղութիւն մը, որ իրենց կը պակսի. ցուցնենք թէ թէեւ մենք պզտիկ հօտ մըն ենք՝ խեղճ, հալածուած ու արհամարուած, բայց Հայրը հաճեր է թագաւորութիւնը մեզի տալ, ընտիր ցեղ մը ու թագաւորական քահանայութիւն մը ընել մեզ: Ուստի երկրի վրայ շրջինք իբր թագաւորի զաւակներ՝ միշտ առաջնորդուած սա հաւատքով թէ մեր Հայրն է տիեզերքի Ղեկավարը:

ՀՈԳ. ԿԵԱՆՔ

ՄԵՂՔԸ

Հապա մեղքը: Կրնայ ըլլալ թէ մեր «Վերէն գորութիւն» փնտռելու շարժառիթը շիտակ է, սակայն մեր անձնական կեանքին մէջ սխալներ կան: Մեր միակ նպատակը Աստուծոյ փառքը կրնայ ըլլալ, բայց թերեւս երեւութապէս փոքր կէտի մը մէջ անհնազանդ կը գտնուինք եւ կը ջանանք մոռնալ զայն: Սբ. Գրքը կ'ըսէ թէ Աստուած Իր Ս. Հոգին Իրեն հնազանդ եղողներուն կուտայ (Գործ. Ե. 32): Մեր Աստուծոյ հանդէպ ցուցուցած հնազանդութեան համեմատութեամբ միայն՝ գորութիւն կը տրուի մեզի: Երբ Աստուծոյ բոլոր պատուէրները կատարեմ, Ասոր բոլոր ունեցածը ինծի կը տրամադրուի:

Հնազանդութիւն: Շատ անգամ քրիստոնեաներ կ'ըսեն, «Ճշմարիտ է թէ ես հոս ու հոն կ'երթամ, բայց ուր որ երթամ, Յիսուս Քրիստոս հետըս կը տանիմ»: Ասիկա Քրիստոսի՝ հնազանդիլ է թէ Քրիստոսը քեզի հնազանդեցնել:

Կիրակի իրիկուն մը երէց մը Սբ. Հոգիին եւ Ասոր առաջնորդութեանը վրայ քարոզեց: Երկուշաբթի առաւօտուն իր կիրակնօրեայ ուսուցչուն հիններէն մէկին հանդիպեցաւ որ պարի կ'երթար: Օրիորդը ինքզինքը չքմեղացնելու համար յարեց, «Ճշմարիտ է թէ ես պարի կ'երթամ, սակայն ես միշտ Սբ. Հոգին իմ հետս կը տանիմ»: «Բայց որչա՞փ ժամանակ է ի վեր է որ Ս. Հոգին քեզմէ խնդրեց Իրեն առաջնորդել», հարցուց երէցը:

Մենք չենք կրնար մարդոց մէջ խղճմտանքի դեր կատարել: Իւրաքանչիւր անհատ Ս. Հոգիին առաջնորդութեանը վստահելու է: Սակայն եթէ կը հետեւինք այնպիսի սովորութիւններու կամ զբօսանքներու որոնց մասին հաւատացեալներուն մեծամասնութիւնը հարկ կը սեպէ ինքզինքը արդարացնել կամ բացատրութիւններ տալ, լաւ չըլլա՞ր որ անոնցմէ հրաժարինք:

Կա՞յ մեր կեանքին մէջ բան մը որ անմաքուր եւ անարժան է: Կա՞յ մեր մէջ ոեւէ աշխարհասիրութիւն, կասկածելի զբօսանք կամ դառնութեան արմատ որ Ս. Հոգիին ներկայութեան արգելք կ'ըլլայ: Թերեւս խորհինք թէ ասոնք պզտիկ բաներ են միայն, սակայն ամենափոքր կամաւոր մեղքն ալ կարող է զմեզ Սբ. Հոգիին գորութեանէն զրկել: Սուրբ Հոգին և մեղքը չեն կրնար միասին մարդուն սրտին մէջ

տիրել: «Մեղքը ի՞նչ է», կը հարցնես: Ս. Հոգին պատրաստ է մեզի այդ հարցման պատասխան տալ, սակայն պարզ հարցումով մը ձեզի պատասխան մը տամ: Մեզմէ որո՞նք երբեմն ընտանեկան աղօթքի միջոցին այնպէս զգացած են թէ չեն կրնար կարգաւ աշխնչ համարը, կամ մատուցանել աշխնչ աղօթքը, որովհետեւ կը տեսնեն թէ իրենց վերջերս ցուցուցած մէկ վարմունքը որոշապէս կը յանդիմանուի անոնց մէջ:

Ժողովի մը առթիւ շատ յարգուած միսիոնարուհի մը անցեալի մէջ գործած իր սխալները խոստովանելու առաջնորդուեցաւ: Անիկա մատնանիշ ըրաւ միսիոնարներու կողմէն գործուած երեք սովորական մեղքեր, — Միսիոնարներու՝ որոնք Քրիստոսի սիրոյն համար կը զոհեն հայրենիք, բարեկամներ, ակնկալութիւններ, հանգիստ, առողջութիւն եւ նոյնիսկ իրենց կեանքը: Անիկա յիշեց թէ իրենց երեք մահացու մեղքերն էին, Չարախօսութիւն, Անձնասիրութիւն, Հպարտութիւն:

Չարախօսութեան մասին ըսաւ, «Մեր միսիոնարական կայանին մէջ չարախօսութեան նըման աւերիչ բան մը տեսած չեմ: Անիկա միութիւնը կը քանդէ: Բարեկամներ իրարմէ կը զատէ եւ ամենասոսկալի կործանումներ կը կատարէ»: Ըսաւ թէ ինք միայն իր ամուսինին կը խօսէր ուրիշներու սխալներու մասին, սակայն Աստուած իրեն ցուցուց թէ ըրածը սխալ էր ու ինք Տէրոջը խոստացաւ վերջ տալ այդ սովորութեան, սակայն ունակութիւնը խիստ խորունկ արմատներ արձակած էր: Աստուծմէ խնդրեց որ իր այդ սովորութեան յաղթող նոր բերան մը եւ նոր միտք մը տայ: Աստուած իր աղօթքը լսելով՝ դադրեցուց իր այդ մեղքը: «Ամենէն անսովոր հրաշքն էր որ իմ վրաս կատարուեցաւ», ըսաւ անիկա:

Աստուած մեզմէ ամէն մէկուն գորութիւն կուտայ չարախօսութենէ հրաժարելու: Միտքդ ուրիշին վրայ թող չերթայ. դուն յանցաւոր ես ասոր մէջ: Մտածէ: Այս մեղքը առաւելապէս սատանայական է: Առաջին մեղքն էր զոր Սատանան ցուցադրեց: Անիկա Աստուծոյ մասին չար խօսեցաւ եւ ողբալի կէտը այն է որ մարդը աւելի ստուրթեան հօրը հաւատաց քան թէ իր Արարչին ու Բարեբարին: Եւ այն օրուընէ ի վեր Սատանան եղած է եղբայրներուն դէմ չարախօսութիւն ընողը (Յայտ. ԺԲ. 10): Անիկա հաճոյք կ'զգայ քեզ եւ զիս օձի վերածելու, խայթոց դնելու մեր լեզուին՝ և իժի թոյն՝ մեր շրթունքներուն վրայ (Սաղ. ՃԽ. 3): Աղամէն ու Եւայէն

սկսաւ: Աղամ Եւան յանցաւոր հանեց սւ Եւան՝
օձը: Սրբուած լեզուի մը սիրանալ պիտի ըլ-
լայ առաջին քայլը զոր մեզմէ շատերը առնե-
լու են, եթէ կ'ուզեն զօրաւոր քրիստոնեաներ
ըլլալ: Ճիշդ այս վայրկեանէն սկսեալ Աստուած
մեզի կամք եւ զօրութիւն պարգեւէ եղբայրե-
րուն դէմ հարախօսութիւն ընելէ դադրելու:

Մեր զաղափարն է սակայն թէ քրիստոնեա-
ներու մեծամասնութեան մեղքերը կը կայանան
օրինաւոր բաներու սխալ գործածութեանը մէջ,
ինչպէս՝ մեր սիրելիները Տէրոջմէ աւելի սիրել,
կամ ճշմարտապէս չսիրել զանոնք որոնց հետ,
որոնց համար եւ որոնց մէջ կը գործենք: Եւ ու-
րիշ առոնց նման թերութիւններ: Որոշ է թէ այն
կենդանի գետերը որոնց համար Տէրը կ'ըսէ թէ
մեզմէ պիտի հոսին, միայն մաքուր անօթներու
մէջէն կարող են հոսիլ: Արդեօք մենք մաքուր
ջրանցքներ ենք: Մուտի շատ անգամ կը կըրկ-
նէր, «Աստուած արծաթէ անօթներ չփնտռեր,
ոչ ալ ոսկիէ անօթներ կը պահանջէ Իր ծառա-
յութեան համար, սակայն Անկէ գործածուելիք
անօթները անպատճառ մաքուր ըլլալու են: Եւ
Աստուած Ինչ գանձեր կրնայ պահել նոյնիսկ հո-
ղէ ամաններու մէջ: Բայց Աստուած կրնայ այս-
պէս մաքրել միայն զանոնք որ բոլորովին Իրեն
կը յանձնուին:

Անպարանքով եւ մակերեսային կերպով
չքննենք անձերնիս: Առանձնանանք Աստուծոյ
հետ եւ խնդրենք որ Ինք յայտնէ մեզի մեր մե-
ղանչականութիւնը: Սաղմոսերգուին հետ աղա-
ղակենք, «Փորձէ զիս ո՛վ Աստուած, ու գիտցիր
իմ սիրտս, զիս քննէ ու գիտցիր իմ մտածմունք-
ներս, եւ նայէ թէ արդեօք չար ճամբու մէջ եմ,
եւ զիս դէպի յաւիտեանական ճամբան առաջնոր-
դէ» (Սաղ. ՃԼԹ. 23-24): Եւ Աստուծոյ Սուրբ Հո-
գին պիտի ցուցնէ մեր սխալը: Արդեօք կարելի՞
է որ՝ Աստուծոյ իմ մեղքս ինծի ցուցնելէն վերջ՝
տակաւին փարած մնամ մեղսալի կամ կասկա-
ծելի ունակութեան մը որ երբեմն ինծի անցո-
ղակի զոհացում մը կուտայ, զիտնալով հանդերձ
թէ անոր փարած մնալով կը կողոպտուիմ Անոր
օրհնեալ ուրախութեան լեցունութենէն եւ կը
կորսնցնեմ վերին զօրութիւնը՝ առանց որուն իմ
ծառայութիւնս եւ վկայութիւնս անարժէք են: Ա-
սիկա թէպէտեւ անհաւատալի կը թուի, սակայն
կարելի է: Այս տողերը կարդացողներէն թերեւս
շատեր կը թուատրեն որ ջնջին, նոյնալի մեղք
մը զիրենք զրկէ այս անպատմելի օրհնութենէն:

Կատարեալ նուիրման կը յաջորդէ անպատ-
մելի ուրախութիւն: Զթուլատրենք որ փոքրիկ

անձնասիրութիւն մը, հպարտութիւն մը, դիւրա-
գրգռութիւն մը, սխալ հասկացողութիւն մը, նա-
խանձ մը, քննադատելու փափաք մը կամ ուրի-
շը յանցաւոր հանելու եւ դատելու ունակութիւն
մը մեր սիրտերուն մէջ մնալով զԱստուած վըշ-
տացնենք, մեր բարեկամները ցաւցնենք եւ մեր
վկայութեանը եւ օգտակարութեանը մնասենք:
Երբ Սբ. Հոգին մեզի սխալ մը կամ կասկածելի
կէտ մը կը ցուցնէ, անմիջապէս յօժարինք զայն
մէկդի դնել: Եւ այսպէս ընենք Քրիստոսի սէրէն
մղուած ու ոչ թէ զօրութիւնս ստանալու սակար-
կութիւնով: Յօժարինք, կ'ըսեմ, քանզի նուիր-
ման խնդիրը ամենէն աւելի կամքի խնդիր է:
Եթէ հնազանդելու յօժարիս, կը հնազանդիս:

ԽՈՐՀՐԴԱՄՈՒԹԻՒՆ

Առանց փայտի կրակը կը մարի: Ա. Ի. 20

Կրակը խորհրդանշան մըն է կեանքին իր
զանազան յայտնութեանց մէջ, ուշադրաւ եւ
խորունկ խորհրդանշան մը:

Կարելի է, արդարեւ, բազմատեղ նիւթական,
բարոյական եւ կրօնական կեանքը լոյսի եւ
տաքութեան աղբիւրի մը, բոցի մը հետ որ կըր-
նայ վառիլ եւ մարիլ, կենդանանալ եւ շիջանիլ:

Կրակը, օրինակ կեանքի, ինքնին կենդանի եւ
խորհրդաւոր բան մըն է որ կ'երեւնայ եւ կը դի-
մանայ նոյն պայմաններու մէջ, ինչպէս, կեան-
քը: Կրակը կրնայ հաղորդակցիլ, ան կը վերա-
կենդանացուի ճարակ տալով եւ առանց փայտի,
այսինքն առանց սնունդի կը մարի:

Կրակը կրկնակ գործ մը ունի. 1. Կ'սպառէ եւ
կը ջնջէ. 2. Կը տաքցնէ, կը լուսաւորէ եւ կը
կենդանացնէ: Թողունք որ մարի սպառող բոցը,
որ վտանգ մըն է, եւ վառ պահենք զայն որ կը
կենդանացնէ եւ օգտակար է:

*
* *

Կրակը որ կը լափէ եւ կը ջնջէ, մարդկային
կիրքերն են: Աստուծոյ խօսքը մեզի կը ցուցնէ
անոնց աղիտալի արդիւնքը եւ մեզ կը հրաւիրէ
անոնց դէմ կռուիլ եւ զանոնք սպաննել: Այս
մասին մեր անձնական փորձագողութիւնն ալ կը
հաստատէ Սբ. Դրային ճշմարտութիւնը եւ մեզի
կը ցուցնէ կիրքերուն վտանգը:

Ատելութիւնը, նախանձը, հեշտասիրութիւնը,
բարկութիւնը, ազահութիւնը մեզ կ'այրեն, կը
տանջեն եւ կը փճացնեն մեր կեանքերը ու
մեզ ահաւոր, աղիտալի կը դարձնեն ուրիշներուն:

Հոգեբու, վիշտերը, տանջանքները նաև կըր-
նան լսելու եւ սպասել մեր հոգիները:

Վերջապէս, տխրութիւնը, յուսալքումը, կաս-
կածը, կիսայրած կոճղեր են, որոնք կը ծածկը-
ւին մոխիրին տակ, բայց որոնք կամաց կամաց
կը ջնջեն մեր մէջ կորովը, ուրախութիւնը եւ
ապրելու փափաքը:

Շատ յաճախ, աւա՛ղ, ճարակ կուտանք այս
կրակներուն, փոխանակ զանոնք թողելու որ կա-
մաց կամաց մեռնին: Մենք յիմարաբար կ'երե-
ւակայենք հանդարտեցնել մեր կիրքերը անոնց
զոհացում տալ փորձելով, կամ անոնց երբեմն
քիչ մը շեղում ընելով: Ընդհակառակը պէտք էր
դրապէս մերժել զանոնք: Առանց փայտի կրակը
կը մարի:

Դուն որ երբեմն ինքզինքդ հրապուրուած կը
զգաս գէշ զգացումէ մը, հակառակ կեցիր Սա-
տանային, անիկա քեզմէ պիտի փախչի. մերժէ
փափաքիդ տեղի տալ՝ դարձնելով խորհուրդդ
եւ սիրտդ դէպի Աստուած: Անոր մօտեցիր եւ
յաղթող պիտի ըլլաս:

Եւ դուն, եղբայրս, որ ընկճուած եւ տկարա-
ցած ես հոգով մը, վիշտով մը, դուն որ կը կաս-
կածիս թերեւս, մի արծալձեր կրակը, թող որ
մարի, դարձուր նայուածքդ վարի անցաւոր բա-
ներէն դէպի աներեւոյթ իրականութիւնները,
խնդրէ Աստուծոյ թագաւորութիւնը եւ Անոր ար-
դարութիւնը, բարիք ըրէ եղբայրներուդ եւ հե-
տըզհետէ տագնապը պիտի անհետի:

*

Բայց կայ օգտակար եւ կենդանացուցիչ կը-
րակ մը որուն պէտք է ճարակ տալ եւ որ պէտք
է փայլի կենդանի պայծառութեամբ մը եւ հա-
ղորդակցի կամաց կամաց. ան է մեր բարեպաշ-
տութիւնը, Աստուծոյ հանդէպ մեր սէրը, Յիսուս
Քրիստոսի վրայ մեր հաւատքը:

Այս կրակը կը մաքրէ, կ'ուրախացնէ կը լու-
սաւորէ եւ կը տաքցնէ մեր ամբողջ էութիւնը:
Երանի՜ անոնց որոնց մէջ ան վառուած է Աս-
տուծմէ, վասնզի միշտակ ինքն է որ կրնայ զայն
վառել: Միայն չմոռնանք թէ այս կրակը կրնայ
մարիլ առանց փայտի: Եթէ զանց ընենք խոր-
հրդածութիւն, աղօթք, ժողովներու յաճախել եւ
ուրիշ օրհնութեան միջոցներ որոնք Աստուած
մեզի կը տրամադրէ, հետզհետէ մեր կրօնական
կեանքը պիտի տկարանայ: Այս է, աւա՛ղ, ինչ
որ պատահած է յաճախ շատ մը լաւ տրամա-
դրուած եւ նոյնիսկ բարեպաշտ քրիստոնեանե-
րու որոնք չեն մոռցած, զարգացուցած, վառ
պահած իրենց բարեպաշտութիւնը:

Յիշենք Սուրբ Գրոց բոլոր յորդորները. —
«Ուժովցէք եւ քաջասիրտ եղէք» (Յես. Ժ. 25):
«Տէրոջը սպասէ, զօրացիր ու սիրտդ թող զօրա-
նայ» (Սաղ. ԻԷ. 14): «Զօրացէք Տէրոջմով» (Եփ.
2. 10): Մէկգմէկ մխիթարեցէք եւ իրարու շինու-
թիւն տուէք» (Ա. Թես. Ե. 11):

Աստուծոյ խօսքը եւ աղօթք, ահա՛ սնունդնե-
րը որոնց մեր հոգիները պէտք ունին սուրբ բո-
ցով մը վառելու համար: Մոռցանք ինքզինք-
նիս Սբ. Գիրքով, ինչպէս որ կ'ընէին մեր հայ-
րերը, աղօթենք հաւատքով, յարատեւութեամբ
եւ արթնութիւնը պիտի գայ եւ կրակի պիտի
տայ բոլոր մեր եկեղեցիները:

Փախչինք չարէն, մարենք անհամաձայնու-
թեան կայծերը, վառ չպահենք գէշ կրակարան-
ները, այլ փնտռենք բարին, չմարենք պլպլացող
պատրոյզը, մօտենանք Անոր որ է Կենդանին եւ
կեանքի աղբիւրը, արծարծենք կրակը եւ լոյսե-
րու պէս փայլինք այս խաւար աշխարհի մէջ:

Թարգ. Ի. Յ. ԱՅՐԱՆՈՒՄԵԱՆ

ԻՆՉՊԷՍ ԴՈՎՏԻ ՕՐԵՐԸ ԵՂԱԿ...

Դուկ. ԺԷ. 28

Կորսնցնելու մէկ վայրկեան չկայ. Սողոմ
քաղաքը կործանուելու աստիճանին հասած է:
Այսպէս յայտարարեցին Դովտի տան մէջ այն
յիշատակելի օրուան նախորդ գիշերը: Երկու
երկնային պատգամաբերներ եկած էին մեծ քա-
ղաքը, եւ Աբրահամի եղբօրորդին Դովտ փութով
ու եռանդով զանոնք հիւրասիրած էր: Անոնք ան-
միջապէս գիտցուցին իրենց այցելութեան նպա-
տակը. — Այս մեծ եւ գեղեցիկ քաղաքը քիչ ա-
տենէն աւերակներու կոյտի մը պիտի վերածուի:
Բայց անոնք կ'ուզեն բնակիչներուն վերջին ազ-
դարարութիւն մը տալ: Պատգամը Դովտն ու ա-
նոր կ'ինը սարսափով լեցուց: Ի՞նչ ընել, ո՞ր եր-
թալ. նոյն քաղաքին մէջ կ'ապրէին իրենց աղ-
ջիկներէն երկուքը՝ որոնք ուրիշներու նման ամ-
բարիշտ մարդոց հետ ամուսնացած էին...:

Հայրը դուրս վազեց եւ առանց դուռը զար-
նելու զնաց մտաւ փեսաներէն մէկուն տունը:
Ամէնը զեռ ոտքի վրայ են, նա աճապարանօք
կը յայտարարէ սարսափելի լուրը. բայց անոնք
ծաղրանքով մտիկ կ'ընեն:

Ո՛հ, կ'ըսէ փեսան, ծերուկին ի՞նչ կ'ըլլայ
կոր, կրօնքը զայն խենդացուցած է:

Ի՞նչ կ'ըսես հայրիկ, կը յարէ երիտասարդ կի-

նը. այս ձայնով մի խօսիր. հիմա տուն գնա. մենք շատ յոգնած ենք եւ քու հետդ չենք կըրնար երթալ, ամբողջ երեկոյին պարեցինք:

Խեղճ հայր, ի՞նչ յուսախաբութիւն: Ատկէ մեկնելով նա իր քայլերը կ'ուղղէ աճապարանօք ուրիշ տուն մը, ուր կը յուսալ աւելի յաջողութիւն գտնել: Արդեօք քնացած են, ժամանակ պիտի ունենա՞յ զանոնք զգուշացնելու:

Այո, ամէն ալ ներկայ էին եւ թղթախաղի շուրջ անսանձ կը զուարճանային:

Ղովտի տարածամ մուտքը զանոնք ամէն ալ իրենց տեղէն ցատկեցուց: Նա շուտով իր ազդարար պատգամը հաղորդեց: Բայց, աւա՛ղ, հոն եւս մարդիկ խուլ ականջներ եւ ծաղրածու լեզուներ ցուցուցին: Զօրաւոր բազուկներ զայն շրջապատեցին եւ մէկ վայրկեանէն նա ինքզինքը փողոցը՝ գիշերուան թանձր խաւարին մէջ գտաւ... Սոսկալիօրէն ահաբեկած իր առանձնութեան եղերական վիճակէն՝ տուն վերադարձաւ ան:

Ղովտին կինը իր ամուսնոյն բացակայութեան միջոցին չարչարանքով լի խորհրդածութիւններ ունեցած էր: Անոր խորհուրդները անցեալին վերադարձած էին: Նա վերստին կը տեսնէր իրենց ամուսնութեան առաջին երջանիկ օրերը: Իր պզտիկ աղջիկներուն ուրախալի մանկութիւնը, անոնք իրենց տան արեւուն ճառագայթներն էին... եւ հիմա այս ամենէն ի՞նչ կը մնար: Աբրահամէ բաժանման տխուր վայրկեանէն անոնք իրենց վրանը Սողոմի քովը բացեր էին: Նա շատ լաւ կը յիշէր այն օրը՝ երբ իր ամուսինը առաջին անգամ ըլլալով քաղաք գնաց ոչխարներ ծախելու: Երբ վերադարձին Ղովտ պատմեց այս սքանչելի քաղաքին շքեղութեան եւ հարստութեան վրայօք՝ կնոջ մէջ հոն երթալու ինչպիսի՛ մեծ փափաք մը արթնցած էր: Յաջորդ ճամբորդութեան նա Ղովտի ընկերացաւ. այն վայրկեանէն սկսեալ կեանքը այլեւս նոյնը չեղաւ իրեն համար: Ո՛հ, յիշատակներու դառնութիւնը...: Նա տեսած էր քաղաքացի երիտասարդաց եւ աղջիկներու վայելչութիւնը, արդուզարդը, դիւրակեցութիւնը, եւ սիրտը նախանձով լեցուած էր: Այս առաւելութիւնները նա իր աղջիկներուն համար ալ ունենալ կ'ուզէր: Անոնք այն ատեն դեռ գիւղացի աղջնակներ էին, երջանիկ, այո՛, քաջաոգի, անհոգ եւ մինակ դաշտի հաճոյքներուն տեղեակ: Մայրը վերջապէս իր ուրողումը տուաւ. իր աղջիկներն ալ այն վայելուչ ընկերութեան մէջ պէտք էր որ մտնէին. անոնք ալ հոն ուրիշներու պէս կրնային փայլիլ. ինչու չէ:

Նա յաջողեցաւ իր ամուսինը համոզել. իւր շատ չանցած ամբողջ ընտանիքով անոնք Սողոմ մտան եւ հոն իրենց բնակութիւնը հաստատեցին: Այսօր նա կ'անիծէր այն օրը, երբ իր փափաքները իրականացան: Ղովտենք հարուստ էին եւ իրենց մուտքը քաղաքի բարձր դասակարգին մէջ մեծ հետաքրքրութիւն արթնցուց: Մարդիկ Ղովտի աղջիկներուն ի պատիւ հաւաքոյթներ սարքեցին: Ո՛հ, ունայնասէր մօրը սիրտը ինչպիսի՛ նախանձով լեցուեցաւ երբ ոգեւորուած պարահանդէսները դիտեց: Իր աղջիկները դեռ պզտիկ գիւղացիներ էին, բայց շատ շուտ կարելի էր զանոնք փոխել: Յաջորդ օրը քաղաքին տանսի ամենէն վարպետ բրօքէսորը կանչուեցաւ, և այս գիւղացի աղջիկները վայելուչ օրիորդներ ընելու գործը անոր յանձնուեցաւ: Քանի մը շաբաթ յետոյ զանոնք ճանչնալ այլեւս գրեթէ կարելի չէր: Շատ չանցած Ղովտի կինը՝ ինքն ալ՝ կըրցաւ հանդէս մը սարքել մեծ աղջկան տարեդարձը տօնելու: Այն օրէն սկսեալ իրենց կեանքը անվերջ հաճոյքներու շարք մը եղաւ: Այս կնոջ սիրտը գոռոզութեամբ լեցուեցաւ երբ տեսաւ թէ իր աղջիկները քաղաքին ամենէն երեւելի ընտանիքներուն հետ յարաբերութեան մէջ էին:

Սկիզբները մայրը քանի մը մտահոգութիւններ ունեցաւ տեսնելով թէ իր աղջիկները՝ իր կարծածէն շատ աւելի առաջ կ'երթային, և նոյն իսկ իր «Բաւական» կարծած սահմանը կ'անցնէին: Անոնք գիշերը շատ ուշ ատեն տուն կը վերադառնային, թուղթ կը խաղային եւ Սողոմացիներուն սովոր եղած բոլոր ծայրայեղութեանց կ'երթային: Բայց պէտք էր շատ խիստ ըլլալ. անկից զատ՝ պէտք էր իր դարուն եւ միջավայրին յարմարիլ որպէսզի՝ իր աղջիկները բարձր դասուն մէջ իրենց տեղերը զբաւէին: Եւ հիմա՝... խեղճ մայր, իր ցանածը հնձելու ժամը հասած էր...:

Այսպէս էին հաւանաբար այս կնոջ խորհուրդները մինչ իր ամուսնոյն դարձին կ'սպասէր: Ո՛հ, ինչ անմիտ կին էի ես՝ որ իմ անմեղ աղջիկներս իմ ձեռքովս աշխարհային եւ ամբարիշտ ընկերութեան մէջ դրի: Ես անոնց երեքք Աստուծոյ վրայով չխօսեցայ, եւ հիմա...:

Ղովտի վերադարձը զայն յանկարծ իր տանջալի երազանքէն ազատեց: «Ո՛ւր են զաւակներս», աղաղակեց մայրը: Պատասխանի հարկ չկար. իր ամուսնոյն մոռալ եւ յուսահատ դէմքը յստակօրէն կը պատմէր անոր անյաջողութիւնը: Այլեւս խօսելու կամ վիճարանելու ա-

տեն չկար. վասնզի նոյն պահուն դուռը զարնը-
ւեցաւ եւ ստիպողական կոչ մը արձագանգեց,
«Ելիր, մի տնտնար», Երկու դեռատի աղջիկնե-
րը կ'ամբողջացնէին տխուր խումբը: Քաղաքին
դուռը հասնելուն՝ ճամբորդները կարճ եւ յստակ
հրաման մը ստացան, «Կեանքիդ ազատմանը
համար փախիր, ետիդ մի նայիր»:

Մօրը սիրտը կը մարէր. ո՛հ, իմ խեղճ զա-
ւակներս. վայրկեան մը յետոյ անոնք սարսա-
փելի չարչարանքներով պիտի մեռնին: Ո՛հ, ա-
նիկա խղճի ի՛նչ խայթով կը հասկնար թէ մեղ-
քին պատասխանատուութիւնը իր վրայ կը ծան-
րանայ: Նա պարտ էր իր աղջիկները պահել եւ
զանոնք դէպի բարին ուղղել, բայց ինք այնքան
փափաքած էր վայելուչ դասակարգին մէջ ա-
նոնց աչքառու դիրք մը շահիլ: Եթէ հօրը ձեռքը
մնար՝ անիկա աւելի իմաստուն պիտի շարժէր,
քանզի «Այն արդարը անոնց մէջ կենալով, աչ-
քովը տեսնելով ու ականջովը լսելով՝ օրէ օր
իր արդար հոգին կը տանջէր անոնց անօրէն
վարմունքովը»: (Բ. Պետ. Բ. 8): Բայց ընտանի-
քին մայրը որոշած էր իր աշխարհիկ նպատա-
կին հասնիլ: Նա աւելի զօրաւոր էր, եւ իր խօս-
քը քաղցնելով իր նպատակին հասաւ: Ո՛հ, ին-
չո՞ւ համար նա Աստուծոյ երես դարձուցած էր
եւ ինքզինքն ու իր զաւակները այս փուլ եւ սը-
նոտի կեանքին զետեղութեանց տուած: Ինչո՞ւ նա
թոյլ տուած էր աշխարհի՝ իրեն սեփական զա-
ւակները աւերել:

Այս վայրկեանին անոնք կ'անցնէին հսկայ
ծառի մը քովէն, որ ճամբուն շուք կուտար: Այս
տեսարանը անոր յիշեցուց ընտանեօք իրենց
Սողոմ մտնելը: Ծիշդ այս ծառին տակ հանգչած
էին. այն ատեն ուրախութեան ու խաղաղութեան
ի՛նչ տեսարան կար: Մինչ ծնողքը կը հանգչէին,
մանուկները կը խաղային: Հոն՝ մօտը ջուրի աղ-
բիւր մը կար՝ որմէ իրենց ծարաւը անցուցած է-
ին: Մանուկներէն մին ինկած եւ իր ոտքը ցաւ-
ցուցած էր. մայրը զայն զիրկը առած ու ցաւած
տեղը համբուրելով՝ մխիթարած էր. ո՛հ, յիշա-
տակներու դառնութիւնը...: Եւ հիմա ի՛նչ տխուր
եւ անուշիկ իրականութիւն: Այս զաւակները
սարսափելի տուալտանքներով պիտի պատժե-
ւէին՝ որովհետեւ անոնց մայրիկը զԱստուծոյ
մոռցած էր...:

Մայրը այլեւս չկրցաւ տոկալ սրտին մէջ
հետզհետէ մեծցող ցաւին: Թերեւս անոնք միտ-
քերնին փոխած են. թերեւս մեր ետեւէն կու-
գան. պէտք է որ գիտնամ. կրնամ անոնց նշանը-
նել որ զան մեզի միանան: Եւ անհետին նայեցաւ:

Ի՛նչ կը պատահի. նա այլեւս չշարժիր:
Մ'այր, կի՛ն, կը կանչեն ճամբորդները: Անիկա
աղի արձան եղած է, իր երեսը դէպի անիծեալ
քաղաքը դարձած:

Ի՛նչ պերճախօս արձան: Ազդարարութեան
ի՛նչ անազանք ամէն դարերու եւ ամէն ժամա-
նակներու ծնողաց համար: Քրիստոսի խօսքերը
ի՛նչ հեղինակութեամբ կ'արձագանգեն դարերուն
մէջէն. «Միտքերնիդ բերէք Ղովտի կիներ» (Ղկ.
ԺԷ. 32): Այս քանի մը բառերը ի՛նչ ողբերգա-
կան եղելութիւն կը յիշեցնեն: Ձեզի համար՝ ո՛վ
հայրեր ու մայրեր, ի՛նչ ազդարարութիւն: Թե-
րեւս դուք ալ ճիշդ այս դժբաղդ կնոջ ըրածը կը
կրկնէք: Կը փափաքիք ձեր զաւակներուն հա-
մար աշխարհային աչքառու դիրք մը ապահո-
վել: Վայրկեան մը կանգ առէք, մտածեցէք եւ
ինքզինքնուդ սա հարցումը ըրէք, «Ես ալ պար-
տի՞մ իմ կարգիս Ղովտի կնոջ քաշած սրտի ցա-
ւերն ու խղճի խայթերը կրել: Իմ զաւակներս
ինչպէ՞ս կը մեծցնեմ: Արդեօք զանոնք Քրիստո-
սի կ'առաջնորդե՞մ՝ կամ թէ զանոնք աշխարհա-
յին վայելուչ ընկերութեան մէջ փայլեցնելու
փառասիրութիւնը ունիմ: Ծնողներ, «Մի սիրէք
աշխարհը, եթէ մէկը աշխարհը կը սիրէ, անոր
ներսիդին Հօրը սէրը չկայ» (Ս. Յովհ. Բ. 15, 16):
Որդեակ, «Բու Ստեղծիչդ երիտասարդութեանդ
տարիներուն մէջ յիշէ» (Ժող. ԺԲ. 1): Մեր օրե-
րուն գործուած ոճրագործութեանց մեծ մասը 25
տարեկանէն վար եղող երիտասարդներու կողմէ
կը գործուին: Դատաստանին օրը բազմաթիւ զա-
ւակներ պիտի ելլեն եւ պիտի դատապարտեն
իրենց ծնողները՝ որոնք այս կեանքի դիւրու-
թիւնները վայելելու համար Աստուծոյ հեռացան,
եւ պատճառ դարձան նաեւ իրենց զաւակներուն
Աստուծոյ հեռանալուն:

Միտքերնիդ բերէք Ղովտի կիներ:

Վալանս

ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆ

.....

Իմ տանս մէջ սրտիս կատարելութիւնովը
պիտի վարուիմ: Սաղ. ՃԱ. 2

Ահաւասիկ ես ու այն զաւակները զորոնք
Տէրը ինծի տուաւ, նշաններ ու սքանչելիքներ
ըլլալու Իսրայէլի մէջ՝ Սիօն բերդ բնակող զգ-
րաց Տէրովը կողմանէ: Եսայ Ը. 18

Ես ու իմ տունս Եհովան պիտի պաշտենք:
Յես. ԻԴ. 15

Ս. ԿՐԱՎԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԸ

ԳԻՐԲ ԵԼԻՑ

(Մաս Ա.)

«Եւ ասոնք են անունները»: Հրէից մէջ այս անունն տակ ճանչցուած էր Մովսէսի Բ. գիրքը, բայց Աղեքսանդրիոյ թարգմանիչները, հետեւելով յունական սովորոյթին, որ գրքի մը պարունակութեան համաձայն կ'անուններ հատոր մը, «Ելից» կոչեցին զայն, քանի որ գրքին Ա. մասը Հրէից Եգիպտոսէ ելքը կը պատմէ:

Ելիցը Ծննդոց գրքին շարունակութիւնն է, քանի որ Յովսէփը յիշելով կ'սկսի: Իրաւ է որ Յովսէփէ Մովսէս երկարող շրջանին մանրամասնութիւնները չկան, բայց այս կարեւոր չէր: Բաւական է մեզի գիտնալ որ «Իսրայէլի որդիները աճեցան, ու բազմացան, եւ շատցան ու խիստ զօրացան եւ երկիրը անոնցմով լեցուեցաւ»:

Այս տեւեց մինչեւ արքայական նոր դերդաստանի մը բարձրացումը որ Յովսէփը չէր ճանչնար: Եգիպտական պատմութենէն կ'երեւի որ գերութեան դժուարութիւնները եւ Մովսէսի ծնունդը տեղի ունեցան Ռամսէս Բ. հօր փարաւոնի օրերուն, իսկ ելքը տեղի ունեցաւ անոր որդւոյն Մենէֆթայի շրջանին: Ելիցը այս կէտէն սկսեալ մանրամասն կը պատմէ Եգիպտոսէ ելքը ու անապատի կեանքին ու մանաւանդ Աստուծոյ օրէնքին յայտնութեան տպաւորիչ մէկ նկարագրականը կ'ընէ: Կը խորհուի որ Ելից գրքին մէջ յիշուած դէպքերը շուրջ 216 տարւան շրջան մը կը գրաւեն:

X

Յաջորդ անգամով աւելի յստակ պիտի տեսնենք որ Ելից գիրքը ի մասնաւորի Աստուծոյ անուան յայտնութիւնը կը բերէ: Այս անգամ միայն բաւ է ըսել որ Ելից գրքին Աստուածը Ծննդոցի Աստուածն է: Ծննդոց մէջ Աստուած ներկայացուած էր իբր Այն, որ կը կամէր իր ուղորմութեամբը բոլոր ազգերուն փրկութեան եւ օրհնութեան պարգեւը հասցնել ընտրեալ ցեղին միջոցաւ: Ելիցը կրկին կը ներկայացնէ զԱյն, որ մշտարթուն կը հսկէ իր ծրագրին հետ կապ ունեցող ամէն պարագայի վրայ, եւ ի հարկին իր գերիշխանութեամբը կը միջամտէ, ամէն բաները իր որոշած ծրագրին յաջողութեան ծառայեցնելու համար:

«Նահապետներուն Աստուածն է որ իր օծեալ ժողովուրդին աղաղակը կը լսէ եւ ազատարար

մը կը զրկէ յանձին Մովսէսի: Նա է որ կը զօրացնէ Մովսէսը, փարաւոնի հետ իր ունեցած պայքարին մէջ, եւ որ ժողովուրդը երկրէն դուրս կը հանէ՝ առաջնորդելով ու պաշտպանելով զայն անապատին մէջ: Ան է մանաւանդ, որ իր կամքը կը յայտնէ Սինայի Օրէնքին մէջ: Երբ Մովսէսի կը կանչէ լեւան բարձունքէն, կ'ըսէ. «Յակոբի տանը այսպէս ըսես եւ Իսրայէլի որդիներուն իմացնես» (Ելից ԺԹ. 3): Այսպէս ցոյց կուտայ այն մտերիմ կապը որ անցեալը ներկային եւ ապագային կը կապէ» (Վեր. Ու. Հ. Կիթոն):

X

Եթէ համառօտիւ կ'անցնինք այս բաներուն վրայէն, պատճառը այն է որ մեր գրքին էն կարեւոր կէտը Սինա լեռնէն օրէնքին արուիլն է: Արդարեւ նախ քան այս, պատահած ամէն ինչ, նախապատրաստական քայլեր են: Իսրայէլ կոչուած էր մարդկային ազգին պատմութեան մէջ շատ կարեւոր դեր մը խաղալու: Դեր մը, որ զինքը բոլոր դարերու մէջ պիտի ենթարկէր մեծ եւ փոքր ազգաց թշնամութեան: Դեր մը, որուն մէջ հաւատարիմ մնալու համար կը կարօտէր ճկուն եւ տոկուն նկարագրի մը: Այս դերը Աստուծոյ վկայ եւ Անոր գիտակից ժողովուրդը ըլլալն էր: Տաժանելի գերութեան բովբին մէջ ընտրեալ ցեղը չարքաշութեան դժուարին դասը կը սորվի: Փարաւոնի ծանր ձեռքը Իսրայէլի բարոյական ջիղը կը դարբնէ: Այս անցեալի փորձառութեամբ նա կարող պիտի ըլլար դիմագրաւելու յետագայ դժուարութեանց: Ուստի Աստուած զայս թուլատրած էր միշտ իր վկայութեան սիրոյն համար:

Մովսէսի ծնունդով եւ հրաշալի ազատութեամբ ժողովուրդին «Փրկիչը» ի յայտ կուգայ: Փարաւոնի արքունիքին մէջ իբր ստաշած բարձր դաստիարակութիւնը զինքը կանխաւ կը զինէր իր մեծ զործին համար: Իսկ Մադիամի անապատին մէջ նա կը սորվի զԱստուած ճանչնալ եւ հետզհետէ իր ունեցածը «Վնաս սեպելու» գաղտնիքին կը տիրանայ:

Ապա պէտք է որ ժողովուրդը արձակուի, ուստի եւ տասը հարուածները որք փարաւոնին խորագէտ եւ յամառ դիմադրութիւնը կը խորտակեն: Կարմիր ծովուն հրաշալի անցքը, յայտարար նշան մ'էր Աստուծոյ հաւատարմութեան եւ ոյժին, թէ Նա ամէն զնով իր ուզած տեղը պիտի հասցնէր վկայութեան աւանդապահները: Անապատէն Սինա լրացուցիչ պարագաներ են հասցնելու «Տաճարաբանեային»:

«Եզրիպտոսի մէջ Աբրահամի ընտրեալ և կոչեալ ընտանիքը աճած էր ժողովուրդ մը ըլլալու: Արդ, ժողովուրդ մը անպայման սահմանադրութիւն մը ունենալու էր, եւ Օրէնքը եղաւ Իսրայէլի ազգային, քաղաքական եւ կրօնական սահմանադրութիւնը»: (Bible Annotée).

Ծիսական եւ ընկերային օրէնքները որոնք այնքան լայն տեղ մը ունին Ելից մէջ, ո՛չ մէկ կերպով հակառակ են Տասնաբանեային, ինչպէս կը փորձեն հաւտացնել արդիական մեկնիչները: Շեշտենք թէ երկուքն ալ նոյն Աստուծոյն եւ նոյն միջնորդին ձեռամբ ժողովուրդին յայտնուեցան: Յետագայ պատուիրանաց նպատակն էր Տասնաբանեան կիրարկել ժողովուրդին ամենօրեայ կեանքին մէջ: Զի Աստուծոյ վկայ ժողովուրդը, պարտէր իր կեանքին յետին մանրամասնութեանց մէջ իսկ ենթակայ եւ համաձայն ըլլալ բարձրագոյն գերիշխանութեան: Ապա, Տասնաբանեային առթիւ երեւցած թանձր ամպը եւ կրակը չլեցո՛ւց նաեւ յետագայ պատուիրանաց համեմատ շինուած խորանը: (Ելից ԺԺ. 9, 18: Խ. 34-35): Աստուած Ինքզինքը երբեք չհակասեր, եւ այս երկու պարագաներուն ալ Իր ազնայտնի և անդիմադրելի ներկայութիւնը զըրական ապացոյց էր որ, ինչ որ եղաւ Աստուծային հրամանաւ էր, Անոր հաճելի և ընդունելի:

X

Օրէնքին կը յաջորդէ խորանին շինութիւնն ու նուիրումը: Իսրայէլի Աստուծոյն տաճար մը պէտք էր, ուստի եւ խորանը, զոր Իր փառքը լեցուց: Նոյն խորանը փառաց Աստուծոյն պալատն ալ էր, զի Նա Իսրայէլի մէջ թագաւոր էր միանգամայն, որ իջած էր ժողովուրդին մէջ բնակելու: Ահա խորանին համառօտ մէկ նկարագրականը:

Նախ ուղղանկիւն քառանկիւն ընդարձակ տաճարութիւն մը, սրահը, սպիտակ վարագոյրներով շրջապատուած: Այս սրահին մուտքին՝ հինգ ոսկեգօծ սիւներ: Ներսը կար զոհի սեղանը եւ պղնձէ աւազանը: Աւելի խորը կը գտնուէր խորանը, որ կիսովին բարձր էր շրջապատէն, կազմուած՝ վրայէ վրայ ձգուած չորս վարագոյրներէն, որ կը հանգչէին ոսկեպատ փայտերուն վրայ:

Գաւիթը տրամադրելի էր ամէն Իսրայէլացիի որ ընծայելիք բան մը ունէր: Հոն կը պաշտօնավարէին Ղեւտացիք, որ Իսրայէլի ընտանիքներուն անդրանիկները կը ներկայացնէին: Գաւիթին մէջ էր զոհի սեղանը եւ պղնձէ աւազանը:

Խորանը երկու մաս ունէր:

ա) Սրբութիւնը, որ կը պարունակէր ոսկեղէն սեղանը, ուր առտու իրիկուն խունկ կը ծխուէր, խորհրդանշելով շնորհակալիք եւ զոհաբանութիւն: Յետոյ եօթը թեւերով աշտանակը, որ Աստուծային ճշմարտութիւնը կը ցուցնէր: Ապա հացի սեղանները, ուր ամէն շաբաթ օր Իսրայէլ իր Աստուծոյն կը մօտեցնէր հողին եւ իր աշխատութեան արդիւնքը: Քահանաները ազատ մուտք ունէին հոն:

բ) Սրբութիւն Սրբոցը, խորանին երկրորդ մասն էր, որ կը պարունակէր տապանակը, որուն մէջ էին աներեւոյթ Աստուծոյ կամքին կոթողները՝ օրէնքին երկու տախտակները: Տապանակին միաձոյլ ոսկիէ կափարիչը, քաւութիւնը կը յիշեցնէր Աստուծոյ շնորհքը որ կը նիրհէ: Թեւատարած եւ քաւութիւնը հովանաւորող քէրովքէները Աստուծոյ կենդանարար զօրութիւնը կը ներկայացնէին: Անոնք կարծես զարմանքով կը դիտեն՝ քաւութեան տախտակին վրայ սրսկուած արեամբ եղած թողութեան անմեկնելի դադանիքը: Յետոյ Սրբութիւն Սրբութեանց վերեւ եւ դուրսէն ալ ամպը կար որ ցոյց կուտար Իր ներկայութիւնը: Միայն մեծ քահանայապետը, տարին մէկ անգամ, քաւութեան օրը կը մտնէր հոն:

Այս բաներուն մէջ Քրիստոսի անձին ու զործերուն նախատիպերը կան, զորս մէջ բերել դուրս կ'իշխայ մեր նպատակէն: Ըսենք միայն որ խորանին նպատակը պաշտամունքի եւ փրկագործութեան կցուած իրողութիւնները դուրս հանել է: Տասնաբանեան Իսրայէլի կը բերէ Աստուծոյ արդար պահանջները: Տասնաբանեային լոյսը ցոյց տուաւ, որ փորձառական կեանքի մէջ մեղաւոր մարդը Աստուծոյ չափանիշին հասնելու կարող չէ, ինչպէս Իսրայէլ խորհեցաւ թէ պիտի կրնար երբ Սինայի ստորոտէն միաձայն գոչեց, «Տէրոջը բոլոր ըսածները պիտի ընենք»: Քահանայութեան եւ զոհերու կարգադրութիւնը թոյլ պիտի տար որ մեղապարտ ժողովուրդը կարողանար թողութեան հասնիլ, մաքրուէր, վերականգնէր, վերահաստատէր իր յարաբերութիւնը ու կարենար պաշտել զԱստուծոյն:

Աստուած Իր լափիլիզող սրբութեան յայտնութեանը հետ զանց չառնէր նաեւ պարգեւել ողորմութեան եւ շնորհքի ծածկոյթն ալ: Արդարեւ Տէրը միայն այս գիտնալով եւ առաջուց՝ Իր փրկարար եւ արդարացնող սիրոյն վստահելով էր որ սկիզբէն ըսաւ, «Ինձի սրբարան մը շինեն որպէսզի իրենց մէջ բնակիմ»: Զ. Բ. Դ.

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Բ. ՊԵՏՐՈՍ ՅԻՍՈՒՍԻ ԴՊՐՈՑԻՆ ՄԷՋ

Նախորդ յօդուածով տեսանք թէ ինչպէս Պետրոս ամէն բան թողուց եւ Յիսուսի աշակերտեցաւ (տե՛ս «Բանբեր»ի Օգոստոսի թիւը):

Անիկա այդ քայլը առաւ կէս առ կէս երկրաւոր ակնկալութիւններէ զրդեալ: Միւս առաքեալներուն նման ան ալ կը յուսար թէ իր Վարդապետը Իսրայէլի մեախական փառաւոր թագաւորութիւնը շուտով պիտի հաստատէր եւ ինքը Անոր ամենաբարձր պաշտօնակալը պիտի դառնար: Բոլոր հրեաներու նման իր ալ մըտքէն չէր անցներ թէ Քրիստոս փառաւորութիւնէ առաջ չարչարանք ու մահ պիտի ճաշակէր եւ թէ ինքն ալ Անոր հետեւելուն պատճառաւ խաչ կըրել պիտի ստիպուէր:

Մեր Տէրը տեղեակ էր Պետրոսի այս ամէն զգացումներուն ու խորհուրդներուն: Այսու հանդերձ նկատեց զայն իբր իր ամենէն մեծ առաքեալը, քանզի գիտէր թէ Հայրը, որ զայն իրեն տուած էր, պիտի կրնար զայն հեռզհեռէ գտել եւ ընտիր գործիք մը ընել: Ուստի կրթեց Պետրոսը մեծ իմաստութեամբ, համբերութեամբ ու սիրով: Մէկ կողմէն քաջալերեց զայն, երբ անոր մէջ հաւատքի կորիզ մը գտաւ, իսկ միւս կողմէն չզլացաւ նաեւ յանդիմանել, երբ թերահաւատութիւն եւ աշխարհիկ շարժառիթներ տեսաւ: Զանաւնք զայս լուսաբանել մի քանի զէպքերով:

Պետրոս իր աշակերտակիցներուն հետ նաւակին մէջ էր եւ կը գտնուէր Գալիլիայի ծովակին վրայ: Լիճին մէջտեղերը ալեկոծութեան բռնընկեցան եւ սկսան տազնապիլ: Յիսուս գիտցաւ զայդ եւ ուզեց ցուցնել աշակերտներուն թէ Ինքը կրնայ անոնց քով երթալ եւ օգնել անոնց՝ նոյնիսկ այն ատեն երբ կը պակսին բնական միջոցները: Ուստի շուրերուն վրայէն քալելով անոնց գնաց՝ գանոնք նեղութենէ ազատելու համար: Սակայն ինչպէս մենք մեր տառապանքներուն մէջ յաճախ չենք տեսներ մեր Տէրը, որ անոնց միջոցաւ մեզի կը մօտենայ՝ մեզ օրհնելու գիտումով, նոյնպէս ալ աշակերտները այնքան շփոթած էին իրենց վախէն որ չճանչցան իրենց Վարդապետը եւ կարծեցին թէ, «Աչքի երեւոյթ բան մը», զժոխային չար թշնամի մը կուգար՝ գիրենք փճացնելու համար» եւ «Կանչուընտեցին»:

Բայց Յիսուս իր քաղցր ձայնովը հանդարտեցուց զանոնք ըսելով, «Քաջ եղէք, ես եմ, մի

վախնաք»: Ատոր վրայ Պետրոսի սիրտը ուրախութեամբ ու հաւատքով լեցուեցաւ: Հաւատաց թէ իր Վարդապետը Տէր եւ Իշխան է ամէն բանի վրայ եւ կրնայ իրեն ալ կարողութիւն տալ՝ շուրերուն վրայ քալելու, ատով մասնակից ըլլալու Անոր իշխանութեանը՝ բնութեան վրայ: Ուստի խնդրեց, «Տէր, եթէ դուն ես, հրաման ըրէ ինձի որ Քեզի գամ շուրերուն վրայէն»: Պետրոս այս խնդրքը ըրաւ ո՛չ թէ սնափառութենէ՝ հապա Յիսուսի նմանելու փափաքէն մղուած:

Քրիստոս ուրախացաւ Պետրոսի այս հաւատքին վրայ, քանզի Ան իր հրաշքները կը ցուցնէր աշակերտներուն՝ ոչ թէ զանոնք ընկճելու, հապա անոնց վստահութիւն ներշնչելու թէ Իրեն հաւատացողը պիտի կարենար աւելի մեծ գործեր գործելու, քան թէ Ինքը (Յովհ. ԺԴ. 12): Ուստի կը հրճուի, երբ կը տեսնէ որ Պետրոս հաւատքի մեծ գործ մը կատարել կը փափաքի. եւ կը խրախուսէ զայն շուրերուն վրայէն քալելու: Բայց շուտով յայտնի կ'ըլլայ որ Պետրոսի հաւատքը զեռ շատ տկար էր: Երբ նաւակին մէջն էր, վստահ էր թէ իր Տէրը ամենակարող է, սակայն երբ շուրերուն վրայ իջաւ եւ հովերուն սաստկութիւնը եւ ալիքներուն կատաղութիւնը տեսաւ, եւ բնութեան ուժը բաղդատեց իր Տէրոյ՝ գործութեան հետ, չկրցաւ այլեւս ըսել թէ անոնցմէ ո՛րն է աւելի մեծը, հապա երկմտեցաւ, թերահաւատեցաւ: Ուստի սկսաւ ընկըզմիլ եւ տազնապիլ մէջ ազազակեց, «Տէր, ազատէ զիս»:

Յիսուս ազատեց զինքը ընկղմելէ, բայց միեւնոյն ատեն յանդիմանեց զինքը այս թերահաւատութեան համար, եւ իրաւունքով, քանզի Պետրոս որ Անոր բազմաթիւ հրաշքները տեսած էր, հաւատալու էր թէ Անոր բոլոր խօսքերը այդ եւ ամէն են, եւ թէ ինքը պիտի կրնար քալել շուրերուն վրայ, քանի որ Ան իրեն այդ արտօնութիւնը տուած էր:

Այս զէպքը Պետրոսը աւելի խոնարհեցուց եւ աւելի զօրացուց անոր հաւատքը Յիսուսի վրայ: Անտարակոյս ան մին էր ամենէն եռանդուն անձերէն որոնք «Եկան ու երկրպագութիւն ըրին Անոր եւ ըսին, իրաւցնէ Որդի Աստուծոյ ես Դուն» (Մատթ. ԺԴ. 33):

Այս հաւատքը օրէ օր աւելի արմատացաւ Պետրոսի մէջ եւ զայն մղեց իր փառաւոր դաւանանքին, որ տեղի ունեցաւ հետեւեալ պարագաներուն տակ:

Յիսուս շրջած էր ամբողջ Քանանոս երկրին մէջ՝ միշտ բարիք գործելով: Սակայն Իսրայէլ

հետզհետեւ աւելի կարծրացած էր եւ զԱյն մերժած: Փարիսեցիներն ու քահանաները բացէ բաց թշնամացած էին Անոր, վասնզի Ան «Շաբաթը կը լուծէր եւ Ինքզինքը Աստուծոյ հաւասար կ'ընէր» (Յովհ. Ե. 16-18): Հասարակ ժողովուրդին մեծ մասը բոլորովին անտարբեր էր եւ կամ Անոր կը հետեւէր «Հացերէն կերած» (Յովհ. Զ. 26) եւ ուրիշ նիւթական բարիքներ վայելած ըլլալուն համար: Միայն փոքր թիւ մը կը կազմէին անոնք որոնք իրապէս կը համակրէին Անոր: Սակայն ասոնք ալ զԱյն կը ճանչնային իբր Յովհաննէս Մկրտիչ մը, կամ Եղիա մը եւ կամ Երեմիա մը, որ եկած էր Իսրայէլը ապաշխարութեան առաջնորդելու ու զայն Մեսիայի գալուստին ու Աստուծոյ թագաւորութեան նախապատրաստելու համար: Բայց անոնցմէ ալ ոչ ոք կը հաւատար թէ Յիսուսը Քրիստոսն է, բուն իսկ Մեսիան, որուն տրուած է ամէն իշխանութիւն եւ որմէ մեծը գոյութիւն չունի:

Յովհաննէս Զ. զլիսուն մէջ կը կարդանք թէ ինչպէս այդ համակիրները, նոյնիսկ աշակերտներէն շատեր կը բաժնուէին Յիսուսէ (Յովհ. Զ. 61, 67), երբ Ան կը յայտնէ թէ Ինքն է Աստուծոյ զրկած Մեսիան եւ յաւիտենական կենաց տուիչն ու հացը, եւ կը պահանջէ որ անոնք Իրեն հաւատան ու Իր առաջնորդութեանը ենթարկուին, անոնք կը մերժեն զԱյն, քանզի Ան իրենց միայն յաւիտենական կեանքի վրայով կը խօսի եւ չուզեր իրականացնել Մեսիայի նկատմամբ իրենց սնուցած աշխարհիկ փառաւոր երազները (Յովհ. Զ. 26-59): Այո, նոյնիսկ տասներկուքէն մին կը սկսէր իր մտքին մէջ դաւաճանական խորհուրդներ յղանալ, քանզի ան ալ իր երկրաւոր շքեղ յոյսերուն քանդուիլը կը տեսնէր (Յովհ. Զ. 65, 71, 72):

Այսպէս Յիսուս Իր հետեւորդներու շարքերը խիստ նոսրացած գտաւ. Ինքը Երուսաղէմ պիտի ելլէ՝ Իր Հարչարանքով եւ մահով մարդոց փրկութեան գործը ի կատար հանելու նպատակաւ: Այդ մեծ քայլը առնելէ առաջ ուզեց իմանալ թէ զոնէ փոքրաթիւ հաւատարիմները ուղիղ դիրք ունէին Իրեն հանդէպ, զոնէ տասներկուքը շիտակ հասկցած էին զԻնքը: Ուստի անոնց հետ կ'առանձնանայ Փիլիպպոսի Կեսարիայի կողմերը, Հերմոն լեռան ստորոտը, եւ հոն զանոնք հարց ու փորձ կ'ընէ ըսելով, «Դուք Ինծի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ»: Պետրոս այս հարցումին պատասխանեց, «Դուն ես Քրիստոս (օծեալ), կենդանի Աստուծոյ Որդին» (Մատ. ԺԶ. 15, 16):

Ասով Պետրոս իբր թարգմանը իր աշակեր-

տակիցներու խորհուրդներուն եւ զգացումներուն յայտնեց թէ, «Իրենց ամբողջ վստահութիւնը Անոր վրայ է եւ չունին աւելի մեծ փափաք մը, քան թէ տեսնել որ Ան կը կառավարէ, Իր գործը ի զլուխ կը հանէ աշխարհի մէջ եւ մասնակից կ'ընէ զիրենք Իր պարգևներուն: Ասով իրենք կը ճանչնան զԱյն իբր Մէկը, Որուն տրուած են Աստուծոյ բոլոր խոստումները եւ թէ ի գործ կը դնէ Աստուծոյ ամբողջ կամքը, Մէկը, Որ Հարին վրայ փառաւոր յաղթանակը կը տանի եւ յաւիտենական կեանք կուտայ: Ուստի իրենք կը խոնարհին Անոր առջեւ զՈր Աստուած իբր Տէր տուած է իրենց եւ ամբողջ աշխարհի: Ան կը յայտնէ նաեւ թէ իրենք Յիսուսը ամէն բանէ վեր կը դասեն, քանզի կը հաւատան թէ Անոր Հայրն է կենդանի Աստուածը, Որ գերիվեր է Իր բոլոր թշնամիներէն, եւ կարող է Իր Որդւոյն հպատակեցնել ամէն բան, հոգ չէ թէ Անիկա խոնարհութեան մէջ կը գտնուի առ այժմ»:(1)

Յիսուս տեսաւ թէ Պետրոսի այս հաւատքն ու դաւանանքը թելադրուած չէին իր բնական զգացումներէն եւ Իսրայէլի մէջ Մեսիայի նըկատմամբ տիրող կարծիքներէն ու յոյսերէն: Եթէ Պետրոս ատոնց հետեւած ըլլար, ինքն ալ պիտի ուզէր ճիշդ այնպիսի իշխան մը, որուն կը սպասէր իր ամբողջ ազգը: Ընդհակառակը՝ Աստուծոյ Հոգին էր, որ բացաւ Պետրոսի աչքերը Իսրայէլի առաջնորդներէն ու աստուածաժախ փարիսեցիներէն անարգուած եւ ամբողջ ժողովուրդէն մերժուած, խոնարհ նազովրեցիին մէջ Աստուծոյ Օծեալը, Որդին տեսնելու:

Ուստի Յիսուս ոգեւորուած՝ աղաղակեց, «Երանի՛ք եզ Սիմոն, Յովնանի որդին, վասնզի մարմինը ու արիւնը քեզի Հայտնեց ատիկա, հապա Իմ Հայրս որ երկինքն է» (Մատ. ԺԶ. 17): Ուրախացաւ, վասնզի տեսաւ որ թէեւ Ինքը Իսրայէլէ մերժուած էր, բայց ապարդիւն ալ աշխատած չէր. Հայրը Իր գործին միջոցաւ տասներմէկ առաքեալներուն հաւատք ներշնչած էր Իր վրայ եւ յանձին Պետրոսի տուած էր Իրեն ամուր վէմ մը, որուն վրայ պիտի կառուցանէր Իր եկեղեցին: Դժոխք ու Սատանայ պիտի յարձակէին վէմին ու եկեղեցիին վրայ եւ զանոնք մեծ փորձութեան պիտի ենթարկէին: Բայց Հայրը, որ զանոնք Իրեն տուած էր, պիտի կրնար պաշտպանել (Մատթ. ԺԶ. 18):

Այս դաւանանքը լսելէն յետոյ՝ կրնար ուրախութեամբ առնել Իր քայլերը դէպի Երուսաղէմ,

(1) Schlatter, Աւետարան ըստ Մատթէոսի էջ 167

մեր փրկութեան գործը իր մահուամբ ի կատար հանելու համար, քանզի գիտէր թէ Աստուած տուած էր իրեն մարդիկ, որոնք Սբ. Հոգիով զօրացած՝ պիտի կարենային իր գործը շարունակել՝ իր երկրէն վերանալէն յետոյ:

Քրիստոս՝ այդ դաւանանքին համար Պետրոսը վարձատրեց վսեմ խոստումներով՝ անոր ըսելով, «Երկինքի թագաւորութեան բանալիները քեզի պիտի տամ, եւ ինչ որ երկրի վրայ կապես, երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ» (Ժ2. 19): Տէրը Պետրոսի այդ վսեմ իշխանութիւնը տուաւ, վասնզի Ան գիտէր թէ Պետրոսը Սուրբ Հոգւոյն գործիքը պիտի ըլլար միայն, պիտի գործէր ոչ թէ մարդկային բնագոյով եւ զգացումով, հապա միմիայն Աստուծոյ կամքին համաձայն: Կը տեսնենք թէ Պենտէկոստէէն յետոյ ինչպէս բառ առ բառ իրականացաւ Յիսուսի այս խոստումը: Այս մասին ուրիշ առթիւ մը:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԿՈՄՍ ՅԻՆՑԷՆՏՈՐՖ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

«Բանբեր»ի նախորդ թւոյն մէջ ծանօթութիւն տուինք այն կանոններուն ու սկզբունքներուն նկատմամբ, որոնցմով սկսաւ կառավարուիլ «Եղբայրական Միութիւնը». անոր հիմը Քրիստոսն էր ու ղեկավարը Անոր Հոգին. ուստի Միութիւնը աւելի մեծ սիրով կապեց եղբայրները մէկ մէկու եւ կամաց կամաց մեծ ընտանիքի մը ձեւ առաւ: Ասոր ապացոյց են.—

1. Երգի ժամերը եւ ընտանեկան աղօթքի համարները: Ամէն երեկոյ Միութեան բոլոր անդամները միասին կը հաւաքուէին (եւ կը հաւաքուին հիմա ալ), եւ իրենց Տէրը կը փառաբանէին երգեցողութեամբ: 1728էն սկսեալ Յինցէնտորֆ՝ այդ ժամերը աւելի օգտակար ընելու զիտումով կ'ընտրէր համար մը Ս. Գիրքէն կամ հոգեւոր երգարանէն, կը բացատրէր զայն եւ այդ կապակցութեամբ մի քանի շինարար թելադրութիւններ կ'ընէր: Յետոյ կը յանձնարարէր բոլոր եղբայրներուն ու քոյրերուն, որ այդ համարին վրայ խորհրդածեն իրենց տուններուն մէջ: Հետեւեալ օրը սոյն համարը միութեան անդամներուն կը յիշեցուէր այն երէցին միջոցաւ որուն կարգն էր այդ առաւօտ միութեան պատկանող բոլոր ընտանիքներուն այցելել եւ նա-

յիլ թէ հոն ամէն բան քրիստոնէական ոգւով կ'ընթանար:

1729ին այս մասին հետեւալ փոփոխութիւնն եղաւ. երէցները թուղթի փոքր կտորներու վրայ գրեցին երգերու եւ Սբ. Գրքի այն բոլոր համարները, որոնք կրնային եղբայրներու եւ քոյրերու օգտակար ըլլալ, ու զանոնք նետեցին տուփի մը մէջ: Յետոյ երէցներէն մին ամէն երեկոյ կը հանէր այս տոմսերէն մին, ինչպէս մէկը վիճակահանութեան տոմս մը կը քաշէ, եւ կը յանձնէր առաւօտեան այցելութիւններն ընող եղբոր. ասիկա միւս օրը տունէ տուն կը պտտեցընէր այդ համարը, կը կարդար զայն եւ անով կը խրախուսէր եղբայրները: Յինցէնտորֆ կը նկատէր այդ վիճակով ելած համարը իբր Աստուծոյ տրուած՝ համայնքին առ օրեայ ներքին կամ արտաքին պէտքին համեմատ: Եւ հարկ է զարմանքով ընդունիլ թէ այդ համարները յաճախ համաձայն էին այդ օրուան վիճակին կամ ամբողջ միութեան եւ կամ անոր շատ մը անդամներուն: 1731րդ տարուան համար Յինցէնտորֆ հրատարակեց առաջին օրացոյցը, որուն մէջ գրուած են ամէն մէկ օրուան ընթերցանութեան յատկացուած երգի եւ Սբ. Գրոց համարները՝ բոլորն ալ ընտրուած վիճակով: Ալ առկէ ի վեր ամէն տարի կանոնաւորապէս լոյս կը տեսնէ մորավեան եղբայրութեան այդ օրացոյցը (Losungsbuechlein) եւ այսօր այնքան սիրուած է հաւատացեալներու մեծամասնութենէն, որ կը հրատարակուի ու կը կարդացուի Ֆրանսիայէն, գերմաներէն եւ անգլիարէն լեզուներով ու մեծ օրհնութեան պատճառ կ'ըլլայ: Քանի՜ քանի՜ քրիստոնէական իրենց ներքին վիճակին համաձայն՝ յանդիմանուած ու արթնցած եւ խրախուսուած ու մխիթարուած են կարգալով այդ օրացոյցին մէջ գրուած համարները: Բայց մորավեան եղբայրներու համար աւելի մեծ օրհնութիւն եղած է ան. քանզի անոնք՝ մասնաւոր սկիզբները՝ իբր Աստուծոյ ամէն մէկ օրուան համար տրուած պատգամներ կարդացած են հոն նշանակուած համարները եւ ըստ այնմ ուղղած իրենց քայլերը:

2.— Աղօթքի ժամերը: «Եղբայրական միութեան գիւղը, Հերնհուլթ, ոչ միայն գիշերապահներ ունէր՝ ինքզինքը զոգեւէ եւ հրդեհէ պաշտպանելու համար, հապա նաեւ աղօթող պահակներ: Ասոնք նախ 24 եւ ապա աւելի մեծ թվով եղբայրներ ու քոյրեր էին, որոնք օրուան 24 ժամերը իրենց մէջ բաժնած էին եւ կարգաւ՝ իւրաքանչիւր ժամու մէկ կամ մի քանի եղբայր

աղօթքով Տէրաջ առջեւ կը կենային՝ համայնքին պէտքերուն համար: Այսպէս, Հերնհոլթի համար իրականութիւն դարձեր էր Եսայիի միջոցաւ երուսաղէմի ուղղուած Տէրոջը խօսքը.— «Ես քու պարիսպներուդ վրայ դէտեր պիտի դնեմ, որոնք ցորեկ ու գիշեր երբեք չպիտի լռեն եւ Տէրը պիտի յիշեն»:

3.— Ընորիակալութեան եւ օմնի օրեր: Ասոնք կը տօնուէին ամիսն անգամ մը՝ շաբաթ երեկոյին: Այդ ժամերուն մէջ կը կարգացուէին օտարութեան մէջ գտնուող եղբայրներէ եկած նամակները եւ կը հաղորդուէին այն լուրերը որոնք կը վերաբերէին քրիստոնէական ընդհանուր գործին: Եղբայրական միութիւնը իբր Գրիստոսի ճշմարիտ մէկ համայնքը, ինքզինքը անգամ կը զգար Անոր մարմնոյն, սուրբ ու անտեսանելի ընդհանրական եկեղեցւոյն. ուստի եռանդուն պահանջքն ունէր հաղորդակցելու Աստուծոյ թագաւորութեան վերաբերեալ բոլոր գործերուն հետ: Ահա այս պահանջին կը պարտին «Ընորհակալութեան օրերը» իրենց գոյութիւնը: Այդ օրուան երեկոյին միասին կը հաւաքուէին Հերնհոլթի եղբայրութեան բոլոր անդամները եւ աչք ականջ կարած կ'ունկնդրէին նոր լուրերը: Կը ցնծային երբ կը լսէին թէ այսինչ տեղը հոգևոր գործը կը յառաջդիմէ եւ կը վշտանային, երբ իրենց որեւէ մէկ եղբոր կամ եկեղեցւոյ կրած նեղութիւնը կը նկարագրուէր: «Ամենէն հեռուոր երկիրն իսկ առարկայ էր իրենց ուշադրութեան: Ուր որ դեռ քրիստոնէականեր գոյութիւն չունէին, կը նկատուէր իբր միսիոնարական դաշտ. եղբայրները կը զգային թէ իրենք պարտական են Գրիստոսի դրօշակը տանիլ հոն: Իսկ Յինցէնտորֆ մարզարէական աչքերով կը տեսնէր թէ Տէրը եղբայրներու շնորհք ու զօրութիւն պիտի տայ՝ գործակցելու այդ պարտականութեան լուծմանը համար»: Այս եռուն հետաքրքրութիւնն ու հաղորդակցութիւնը ընդարձակեց Հերնհոլթի միութեան պատկանող եղբայրներու մտքի հորիզոնը եւ անոնց սիրտերը լեցուց սիրով՝ հանդէպ մէկմէկու եւ բոլոր հաւատացեալներու: Կը զգային անոնք թէ կատարելիք մեծ պարտականութիւններ ունին եւ այդ զգացումը իրենց միութեան կապը ա'լ աւելի կը զօրացնէր:

4.— «Սիրոյ խնձոյքները»: Ասոնք հաստատունեցան առաքելական դարու եկեղեցւոյն օրինակին հետեւելով (Ա. Կոր. ԺԱ. 17-23): Սակայն զեղծումի տեղի չտալու համար՝ չէր թուլատրուեր որ որեւէ ընտանիք իր ուտելիքն ու խմելիքը հետը բերէր, հապա բոլորին խմելիքն ու կե-

րակուրը նոյնն էին՝ բաղկացած առաջին տարին միայն ջուրէ ու թուխ հացէ, իսկ վերջերը թէյէ ու ճերմակ հացէ: Սակայն այդ սիրոյ խնձոյքներուն պիտաւոր նպատակը ուտելն ու խմելը չէր, հապա եղբայրական մտերիմ հաղորդակցութիւն, ու զուարթ խօսակցութիւն: Ասոնք եղբայրական միութեան զուարճութեան աղբիւրներն էին: Մարդս զուարճութեան այնքան պէտք ունի որքան մոռնողի, գործի ու կազդուրման: Բայց զուարճութեան միջոցները կախում ունին մարդուն նկարագրէն. ազնիւ մարդը ազնիւ բաներով կը զուարճանայ, իսկ կոշտը՝ գոհիկ բաներով: Եղբայրական միութեան անդամներու լուրջ նշկարագրին համապատասխան զուարճութիւններ էին այդ «Սիրոյ խնձոյքները», որոնց անոնք կը մասնակցէին մեծ ուրախութեամբ եւ որոնցմէ կը բաժնուէին՝ իրենց հետ տանելով զուարթ տրամադրութիւն եւ միաբանութեան զօրաւոր զգացում:

5.— Հաղորդութեան Սուրբ Խորհուրդը: Ամիսն անգամ մը տեղի կ'ունենար այս: Սուրբ Սեղանին մօտենալէ մի քանի օր առաջ երէցները լուրջ քննութենէ մը կ'անցնէին բոլոր հաղորդականները եւ զանոնք սուրբ խորհուրդին կը պատրաստէին նախապատրաստական ժողովով մը: Հաղորդութենէն յետոյ եկեղեցիէն կուգային Հերնհոլթ, կը հաւաքուէին իրենց սրահին մէջ եւ խաղաղութեան համբոյր կուտային՝ եղբայրներ եղբայրներու եւ քոյրեր քոյրերու: Այդ օրերուն մէջ վէճ կար հաղորդութեան խորհուրդին նշկատմամբ, լուտերականներ մասամբ գոյափութութեան կը հաւատային, իսկ բարեկարգեալներ միայն Յիսուսի մահը պատմելու համար կը հաղորդուէին: Եղբայրական միութիւնը այդ մասին երբեք խօսք չէր ընէր: Լուտերական եւ կալվինական միեւնոյն սուրբ սեղանին կը մասնակցէր իր ըմբռնման համաձայն: Սէր եւ միաբանութիւն, քրիստոնէական այս երկու կարեւոր առաքինութիւնները ունեցող կենդանի եկեղեցի մը չի կրնար վիճիլ վարդապետական երկրորդական հարցերու շուրջ եւ ատով պառակտում ձգել եղբայրներու մէջ, ինչպէս այսօր կ'ընեն դժբաղդաբար շատ մը հայ եկեղեցիներ եւ պատճառ կ'ըլլան Գրիստոսի մարմնոյն տկարանալուն:

Ահա այս նպատակաւ էր նաեւ որ խումբ մը ամուլի երիտասարդներ միութիւն մը կազմելով՝ բաժնուեցան իրենց ընտանիքներէն իւր սկսան ընակիլ իրենց սեփականացուած առանձին տան մը մէջ. հոն անոնք միասին կը

ճաշէին ու կը բնակէին: ցորեկը կը հետեւէին իրենց երկրաւոր գործերուն, իսկ իրիկուն պարագայ ժամերը կը նուիրէին այնպիսի զբաղումներու, որոնց նպատակն էր նախապատրաստուիլ իրենց ապագայ ծառայութեան՝ Աստուծոյ թագաւորութեան յառաջդիմութեան համար: 1730ին ասոնց օրինակին հետեւեցան 18 կոյսեր ալ: Ասոնք ալ քաշուեցան իրենց յատկացուած տուն մը եւ կազմեցին երիտասարդուհեաց միութիւն մը. անոնց ձգտումն էր ամբողջ սրտով ու մտքով Տէրոջը նուիրուիլ, Աստուծոյ ժողովուրդին անպատշաճ ճամբաներէն հեռու մնալ եւ կուսական կեանք ապրիլ: Յետոյ այն 18ին միացան Հերնհուլթի միւս օրիորդներն ալ:

Հերնհուլթի օրիորդներն ու երիտասարդները ամուսնանալու եւ սեփական ընտանիք կազմելու մեծ ձգտում չունէին, քանզի զաղուծը նոր էր և քաղաքական անստոյգ պայմաններու տակ. մարդիկը միշտ վախ ունէին թէ կառավարութիւնը կրնայ յանկարծ զիրենք վռնտել իրենց նոր հայրենիքէն: Ուստի երիտասարդներն ու օրիորդները փոխանակ ամուսնութեան ետեւէ իյնալու՝ Պօղոսի նման կը խորհէին թէ ինչպէս կրնան Տէրը փառաւորել եւ հեռու երկիրներ երթալով Անոր վրայով վկայութիւն տալ: Սակայն տարիներ ետքը, երբ Հերնհուլթի զաղուծը սկսաւ կառավարութեան պաշտպանութիւնը վստելել, այն ատեն եղբայրական միութիւնը սկսաւ խորհիլ նաեւ քրիստոնեայ ընտանիքներ կազմելու վրայ:

Այսպէս՝ ինքնատիպ հոգեւոր կեանք մը եւ եկեղեցական կազմակերպութիւն մը՝ եղբայրական միութիւնը՝ գոյութիւն առաւ Հերնհուլթի մէջ՝ Յինցէնտորֆի ղեկավարութեամբ: Միութեան մէջ Քրիստոսի սէրը կը բոցավառէր: Բընական էր որ անիկա շուտով քրիստոնեայ մարդոց ուշադրութեան առարկան պիտի դառնար՝ համաձայն Քրիստոսի խօսքին, «Քաղաք մը որ լերան վրայ կեցած է, չկրնար պահուիլ» (Մատթ. Ե. 14):

Պերլինի արքայական պալատի հովուապետը՝ Եսայլոնսկի, որ մորավեան եղբայրութենէն կը սիրուէր, կարգաց այս լերան վրայի քաղաքին նկատմամբ եւ գրեց Յինցէնտորֆի, «Իմ ծնողքս եղբայրութեան եկեղեցւոյն մէջ ծնած են... ես ալ նոյն եկեղեցւոյն մէջ դաստիարակուած եմ, եւ անոր հանգէպ սէր ծծած իմ մօրս կաթին հետ: Երբ Հերնհուլթի մասին պրոլած տեղեկութիւնը կը կարգայի, ինծի թուեցաւ թէ վերակենդանացած կը տեսնէի առաջին քրիստոնեաներու առաքելական կենցաղավարութիւնը...

մասնաւորաբար շատ ուրախացայ որ Հերնհուլթի մէջ լուսերակահներ եւ բարեկարգեալներ իրարու հետ կը յարաբերին եղբայրական սիրով. այս է չեխական (մորավեան) եղբայրութեան սեփական յատկանիշն ու նկարագիրը»:

Եղբայրական միութեան բարբ համբաւը հասաւ նաեւ ուրիշ տեղեր: Ենայի համալսարանին մէջ կային մի քանի արթնցած ուսանողներ, որոնք միասին կուգային եւ հոգեւոր ժողովներ կ'ընէին: Անոնց հրաւերով Յինցէնտորֆ հոն գընաց՝ չորս տարիներու ընթացքին երկու անգամ, խօսեցաւ անոնցմէ ամէն մէկուն հետ առանձին, սարքեց նաեւ ժողովներ եւ վերջապէս յաջողեցաւ կազմել նաեւ հոգեւոր միութիւն մը ուսանողներու մէջ: Միութեան անդամներու թիւը հետզհետէ աճելով հարիւրի հասաւ: Ասոնցմէ շատեր յետոյ դարձան Աստուծոյ հաւատարիմ ծառաներ եւ ծառայեցին ոմանք լուսերակահ եկեղեցւոյն ու եղբայրական միութեան եւ ուրիշներ՝ միսիոնարութեան մէջ:

Յինցէնտորֆ հրաւերով գնաց նաեւ Հալէ եւ հոն ալ յաջողեցաւ ուսանողներու մէջ հոգեւոր միութիւն մը հիմնել, որու անդամները քիչ ետքը հարիւրը անցան: Յետոյ գնաց Գերմանիոյ ուրիշ մի քանի քաղաքները եւ գրեթէ ամէն տեղի մէջ յաջողեցաւ կազմակերպելու եւ գորացնելու հաւատացեալները:

Այո, ան հրաւերով գնաց նոյնիսկ մինչեւ Տանիմարքա: Հոն նախ ներկայ գտնուեցաւ գահաժառանգին թագադրութեան (1731): Քանի որ արքունական ընտանիքին մէջ շատ մտերիմ ծանօթներ ունէր, ջանաց անոնց միջոցաւ համոզել թագաւորը, որպէսզի իրեն թուլատրէր Տանիմարքայի մէջ ալ քրիստոնէական եղբայրութիւններ հաստատել: Իր այս փափաքը չկատարուեցաւ եւ ինք ստիպուեցաւ դարձեալ Հերնհուլթ դառնալ: Բայց այդ այցելութիւնը պարապ ալ չանցաւ, քանզի անիկա առիթ տըւաւ շուտով սկսելու միսիոնարական գործը հեթանոսներու մէջ:

Այս մասին յաջորդիւ:

X X X



ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԿԱՐԴԱ՛

Սիրելի մանուկներ, այսօր ձեզի պիտի պատմեմ երեք փոքր պատմութիւններ, որպէսզի տեսնէք թէ որքա՛ն օգտակար է կարդալ Ս. Գիրքը:

1. Հիւս. Ամերիկայի մէջ սեղանաւոր մը ճամբորդութիւն կ'ընէր իր եղբորորդւոյն հետ: Կոյս անտառի մը մէջ էին եւ իրիկուն մը ստիպուեցան մտնել խրճիթ մը, որ կեցած էր անտառին մէջ միւս միւսակը: Անոր պատերէն կախուած էին շատ մը կացիներ, մուրճեր, հրացաններ եւ ատրճանակներ: Հոն կը բնակէր մէկ մարդմիայն որ շատ սակաւահաս էր եւ վարմունքով կոշտ ու կոպիտ: Ճամբորդները կարծեցին թէ աւագակի մը ճանկերուն մէջ ինկած են: Ուստի որոշեցին որ մէկուն քնացած ատենը միւսը արթուն մնար, եւ լեցուած ատրճանակը ձեռքը՝ հսկէր: Հսկելու կարգը նախ եղբորորդւոյն էր: Ասիկա աչքերը լարած՝ իրենց խցիկին մէկ ճեղքէն կը դիտէր միւս խցիկը, եւ տեսաւ որ հոն տան տէրը նախ իր ընթրիքն ըրաւ, եւ ապա անկիւնէ մը դուրս քաշեց հաստ ու հին Սուրբ Գիրք մը, կարդաց անկէ հատուած մը՝ մեծ երկիւղածութեամբ եւ ետքն ալ ծունկի եկաւ ու աղօթեց: Ատոր վրայ երիտասարդը բոլորովին հանդարտեցաւ, հօրեղբօրը քով գնաց եւ ըսաւ, «Մենք կրնանք հանգիստ քնանալ, մարդը իրիկուան օրհնութիւնը ստանալու համար՝ Սուրբ Գիրք կարդաց, անիկա մեզի փնաս չպիտի տայ»: Իրաւ ալ մարդը բոլորովին անվտանգ փայտահատ մըն էր: Ատուն հիւրերը առատօրէն վարձատրեցին փայտահատը՝ իրենց վայելած հիւրասիրութեան համար եւ սիրալիր խօսքերով հրաժեշտ առին անկէ եւ հեռացան: Ասով կը հաստատուի հետեւեալ խօսքը:

Եթէ տան մէջ Սբ. Գիրք չկայ,
Տրտում տխուր է անիկա.
Հոն կը մտնէ չար թշնամի,
Եւ ոչ Աստուած մեր սիրելի:

2. Հարուստ մարդ մը ունէր մէկ հատիկ որդի մը, որ շատ թեթեւաբարոյ կեանք մը կը վարէր: Հայրը լուրջ հաւատացեալ մըն էր եւ իր կարելին չէր խնայեր որ երիտասարդին խելքը զլուխը գար, բայց ի գո՛ւր: Վախ կար որ հօրը մեռնելէն ետքը՝ որդին օրէ օր աւելի պիտի խնար, քանզի անիկա պիտի ժառանգէր մեծ հարստութիւնը եւ կրնար զայն չարաչար գործածել եւ անով փճացնել իր մարմինն ու հոգին:

Երբ հայրը մահամերձ հիւանդ էր, որդին կանչեց իր անկողին քով եւ հարցուց անոր, «Կ'ուզե՞ս իմ մէկ խնդիրքս կատարել»: «Սիրով», պատասխանեց որդին: Ատոր վրայ հայրը ըսաւ, «Իմ մեռնելէն յետոյ ամէն օր առանձնացիր մի քանի վայրկեան այս սենեակը եւ Սուրբ Գիրքէն կարդա զլուխ մը. այսպէս շարունակէ լման տարի մը»: Որդին խոստացաւ եւ խոստումը յարգեց: Առաջին օրերուն միայն կարճ զլուխները կը կարդար, բայց քիչ յետոյ հետաքրքրութիւնը զօրացաւ եւ սկսաւ եռանդով կարդալ ու քննել ամբողջ Սուրբ Գիրքը: Որքան կարդաց զայն, այնքան ատեց մեղքը ու իր թեթեւօլիկ կեանքը, եւ Գրիստոսի զօրութիւնով փոխուեցաւ ու եղաւ նոր ու բարի մարդ մը: Որչա՛փ մեծ ճշմարտութիւն մըն է Սաղմոսին սա խօսքը. — «Երիտասարդ ինչո՞վ մաքրէ իր ճամբան, Քու խօսքիդ համեմատ անոր զգուշութիւն ընելով» (Սաղ. ՃԺԹ. 11):

3. Երիտասարդ մը կ'ուզէր նաւաստի ըլլալ: Նաւ մտնել եւ ամբողջ աշխարհը պտտիլ: Սակայն այս շատ վտանգաւոր զործ մըն է, քանզի նաւաստիները ընդհանրապէս նկարագրով շատ ինկած են. անոնք ծովեզրեայ քաղաքներուն մէջ ամէն տեսակ գէշ բաներ կը տեսնեն եւ իրենք ալ օրէ օր չար կ'ըլլան: Երիտասարդին աստուածավախ քոյրը դիտէր այս ամէնը: Ուստի երբ իր եղբօրը, «Երթաս» բարի ըսաւ, անոր տուաւ փոքր Սուրբ Գիրք մը եւ խնդրեց որ միշտ կարդայ զայն: Երիտասարդ նաւաստին խոստացաւ: Սկիզբները կարդաց զայն միայն քրոջ սիրոյն համար, բայց հետզհետէ տեսաւ իր մեղքերը եւ Գրիստոսի չարչարանքն ու մահը իրեն համար, ուստի այլեւս Սուրբ Գիրքը կը կարդար Փրկչին սիրոյն համար:

Այս փոքր պատմութիւններէն կը տեսնենք թէ Սբ. Գիրքը չար սիրտերը բարիի փոխելու աստուածային զօրութիւնն ունի: Ով որ կը սիրէ ու կը կարդայ զայն եւ կը հնազանդի անոր, օրէ օր կը մաքրուի եւ Գրիստոսի կերպարանակից կ'ըլլայ: Յիսուս ըսաւ, «Սրբէ զանոնք Քու ճշմարտութիւնովդ, Քու խօսքդ ճշմարտութիւն է (Յովհ. Ժէ. 17): Իցի՛ւ թէ մեր բոլոր մանուկներն ալ շատ սիրեն եւ կարդան Աստուծոյ խօսքը:



ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՍՊԱՆՈՅ ՄԷՋ

Կարծէ ակնարկ մը նետել մեր այս դրացի երկրին ներկայ կրօնական վիճակին վրայ: Մեր տեղեկութիւններուն համար ամենէն վստահելի աղբիւրը կրնայ հայթայթել Տր. Բէլլըր, Զուիցերիացի մեծ հեղինակութիւնը, որ իր կեանքը նուիրած է միջազգային բողոքականութեան շահերուն եւ խաղաղութեան մեծ դատին:

Սպանիա է՝ եւ երկար ատեն պիտի մնայ անտարակոյս հիմնովին Հռովմէական, թէեւ իր կաթոլիկութիւնը տարբեր է Գրանսայինէն, ուր Վերականգմեալ Եկեղեցւոյն ի գործ դրած ազդեցութիւնը ակներեւ ու բարեբաւարիկ իրողութիւն մըն է:

Բողոքականութիւնը չէ թափանցած ըՍպանիոյ մէջ, որուն սահմանները ամրապէս փակուած էին անոր դէմ: Իսկ ի՞նչ է կաթոլիկութեան այժմու վիճակը հոն. կը փափաքէնք լուռ անցնիլ ատոր վրայէն. միայն յիշենք թէ հինգ հազար վանքերէն երկու հարիւրը կրակի տրուած են այդ զուտ կաթոլիկ երկրին մէջ:

Յեղափոխութենէն առաջ աւետարանականութիւնը օրինապէս գոյութիւն չունէր Սպանիոյ մէջ: Տակաւին երկու տարի չըներ, երբ, ոչ-բողոքական կին մը բանտարկուեցաւ, որովհետեւ իր մէկ դրացուհիին ըսած էր թէ ըստ Աւետարաններուն՝ Մարիամ Յիսուսէն զատ ուրիշ զաւակներ ալ ունեցած էր:

Ներկայիս բողոքականութիւնը մեծ ընդունելութիւն կը գտնէ Սպանիոյ մէջ, մասնաւորապէս այնպիսի անձերու կողմէ՝ որոնք մեծ ազդեցութեան տէր են այժմ: Պ. Լուի տըլլուէթա, արտաքին գործոց նախարարը եւ Զինագեղձման Խորհրդաժողովին սպանիական պատուիրակութեան պետը, թունթ հակակղերակ մը ըլլալով հանդերձ՝ համոզուած քրիստոնեայ մըն է որ Ս. Գիրքը կատարելապէս գիտէ: Պ. Ազանա, խորհրդարանին պետը, սպաներէնի թարգմանած է Պարրոյի մէկ գիրքը, «Սուրբ Գիրքը Սպանիոյ մէջ», ուր կ'ըսուի թէ առանց Ս. Գրքին ազատութիւն պիտի չըլլայ Սպանիոյ մէջ: Հոս զանց կ'ընենք յականէ յանուանէ յիշել ուրիշ մեծ անձնաւորութիւններ, որոնց խոր համոզումն է թէ ժողովուրդի մը համար բարոյական խարխիւ մը անհրաժեշտ է, եւ այդ խարխիւը կը գտնուի լոկ քրիստոնէութեան մէջ, վսեմ եւ հոգեւոր Բրիստոնէութեան մը, որ աշխարհին նա-

յելով յոռետես է, իսկ Աստուծոյ նայելով՝ լաւատես:

Յեղափոխութեան վաղորդայնին իսկ երիտասարդ եւ տկար Բողոքականութիւնը երջանիկ դրութեան մը մէջ գտաւ ինքզինքը եւ սկսաւ իր գոյութիւնը զգալի ընել: Պարչելոնայի պէս քաղաքներու մէջ սարքուեցան կրօնական խորհրդաժողովներ, որոնք ջերմ ընդունելութեան արժանացան: Շատ մը քաղաքներու եւ գիւղերու մէջ բողոքականներու յանձնուեցան բարձր եւ պատասխանատու պաշտօններ, ինչպէս քաղաքապետութիւն, դատաւորութիւն եւն: Շատ մը կողմերէ Բողոքականութենէն կը սպասուի փրկարար ներշնչումը երկրին վերականգմութեան համար:

Ասոնք երջանիկ հեռանկարներ են իսկապէս Սպանիոյ բոլոր մը աւետարանականներուն եւ համայնքներուն համար, որոնք սակայն միւս կողմէ մեծ պատասխանատուութեանց տակ կ'իյնան: Ասոնց համար մեծ վտանգ կը սպառնայ եթէ իրենց դատը միացնեն քաղաքական ոեւէ խմբակի մը դատին եւ կամ իյնան ծայրայեղութեան ճամբուն մէջ: Ասոնք մասնաւորապէս զգուշանալու են «յարանուանականութեան» չարիքներէն եւ նոյն հաւատքով միացած մէկ ճակատ կազմելու են աշխարհի դէմ: Անոնց առաջին պարտականութիւնն է քրիստոնէական ոգիով տոգորուած մարդիկ պատրաստել, ինչպէս նաեւ հովուական խումբ մը կազմակերպելով ժողովուրդին բազմազան պէտքերուն հասնիլ: Անոնք իրենց կրթական հաստատութեանց տուած արդիւնքը գերազոյս աստիճանին բարձրացնելու ջանադիր ըլլալու են:

Աստուած պիտի օգնէ անոնց իրենց այս վեհ կոչմանը մէջ:



Rédaction du « PANPÈRE »

7, Rue Papère - MARSEILLE (France)

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN, 39, Rue St.-Savournin - Marseille

ՀԱՅ ԱԻԿՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շաբաթամիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԻ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դպրոց մանկանց 11 Rue de l'Eclipse
(Շաբաթամիջի ժողովներ Սէն Լուի, Կարտանի, Սէն Ժիւլիէնի, Սէնձ Անձուանի, Սէնձ Մարկրի-
թի, Սէն Ժէրոմի Պուլվար Օտօի մէջ):

Սէն Լուի.—

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:
9. 30ին Ս. գրական ուսումնա.
16 ին քարոզածողով:

Սէնձ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՅՈՒԱ.— Քարոզիչ՝ Պրն. Ս. Պագգալեան,
14 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ:
15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

Սէն Փիէթ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով:

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:
14ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԱԼԼԵՍ.— Քարոզիչ Պրն. Վահան Սահակեան,
18 Rue de l'Isle.

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ:

ԻՍՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՐՇ— Հովիւ' Պատ. Ժ. Պարսումեան,
18 Rue du Dr. Rebatel.

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու
ժողով (15 օրը անգամ մը):
18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
Rue Wilson.
15ին աղօթածողով:

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ԷՍԹԵՐՍՕ.—

Կիր. ժամը 10. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով Pascalի շէնքը

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ— Քարոզիչ Պրն. Ի. Արքայամեան
2. Place de la Paroisse.

Կիր ժամը 10. 30ին քարոզածողով
51 Rue de la République.
17ին աղօթածողով
Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ:

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

ԲԱՐԻՋ— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պոստաքեան,
13 Bd. du Lycée Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով
735 Bd. de Sebastopol Paris 2^e
Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին
37 Rue Tournafort Paris 5^e
Metro Mouhe Aut. K.

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդաց
Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:
Ամսոյն Գ. կիրակիները երիտասար-

դութեաց Քրիստոնէական Միութիւն
բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Գ. կիրակիները Սբ. Գրոց
մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր, ժամը 20. 30ին աղօթածողով
59 Ave. du Bas Meudon Ile St Jermain
Issy les Moulinaux.

ԱԼՅՕՐՎԻԼ.— Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
Կիր. ժամը 15. 30ին աղօթածողով
Rue des Brochets, Alfortville.

1) 1933 տարւոյ Յրացոյցը տպագրուած է: Ապսպրել ուզողներ օր առաջ թող գիմեն մեզ որպէսզի իրենց պահանջներուն կարենանք գոհացում տալ: Անցեալ տարի շատեր գիտին թէ ստիպուած էինք զիրենք մերժել օրացոյցը սպառած ըլլալուն պատճառաւ: Կանուխ հրատարակեցինք որ համայնքներ կամ ընկերութիւններ մէկ անգամէն իրենց շըրջանակին համար հաւաքական ապսպրանքներ ընեն: Շատ թուով ապրտպրանքներու առթիւ թղթ. ծախքը մենք կը վերցնենք:

Գին 6 ֆր. Ֆրանսա եւ Սուրիա, 7 ֆր. կամ 30 սէնթ Արտասահման

2) Եթ մոռնաք թէ Լայն եւ Նեղ ձամբան Հայերէնով տպուած է: Իր տեսակին մէջ առաջնակարգ գործ մըն է, պատկեր մը, որ քանի մը աւետարանչական ժողովներու նիւթ կրնայ տալ: Եթե ունիւն եւ գինը տես գեղարուեստական պատի պատկերներու թիւ 6 ր:

3) Ենթեան եւ Նոր տարուան առթիւ շնորհաւորական քարդեր ուզողներ թող հասին ժամանակին ապսպրել: Եթ քով արդէն պատրաստ կան:

ԵԹ ԲՈՎ ՊԱՏՐԱՍՏ ԿԱՆ

Ա) ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

1. Բարի Հովիւր
2. Գոռը զարնող Փրկիչը
3. Յիսուս հովն ու ծովը կը հանդարտեցնէ
4. Մարիամ եւ Մարթա
(մեծութիւն՝ 37 սմմ. երկ. եւ 27 սմմ. լայն)
Գին՝ 5 ֆր. ձեռքէ, 6 ֆր. թղթ. ծախքով
5. Տասը կոյսերը
(մեծութիւն՝ 29 սմմ. երկ. եւ 26 սմմ. լայն)
Գին՝ 4 ֆր. ձեռքէ, 5 ֆր. թղթ. ծախքով
6. Լայն եւ Նեղ ձամբան.
(մեծութիւն՝ 63 սմմ. երկ. 50 սմմ. լայն)
Գին՝ 6 ֆր. ձեռքէ, թղթ. ծախքով 7

Բ) ՊԱՏԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

որոնց իւրաքանչիւրին վրայ կան հետեւեալ համարներէն մին՝ Յով. Գ. 16, Գործ. Գ. 12, Փիլ. 7, 8, Ա. Յով. Գ. 10:
(մեծութիւն՝ 16 սմմ. երկ. 11 սմմ. լայն)
Գին՝ մէկ ֆր. Թղթատարական ապսպրանք 25էն պատրաստ ըլլալու չէ:

Գ) ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱՐՏԵՐ

1. Ենթեան քարդեր, (ծաղկանկար կամ պատկեր մը Փրկչին մանկութեան կեանքէն, իրեն յարմար Սր. Գրական ոսկեղէն համարով մը օժտուած)
2. Նոր տարուան քարդեր, (ծաղկանկարի մը վրայ Նոր տարուան բարեմաղթութեան հետ նաեւ Ս. Գրական յարմար ոսկեղէն համար մը):
3. Զատիկուան քարդեր, (ծաղկանկար, Զատիկուան բարեմաղթութեան պատմական առարկաներու համար մեր Post Cheque compten է

H. N. Ghazarossian, 182, 53 Marseille.

Բոլոր ապսպրանքները կանխիկ ըլլալու են:

մաղթութեան հետ նաեւ օրուան յարմար Սր. Գրական ոսկեղէն համար:

Գ) ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ ՓՐԿԶԻՆ ԿԵԱՆՔԷՆ
(քարդի ձեւով)

Գին՝ տիպէնը ձեռքէ վեց ֆրանք, Թղթատարական ապսպրանքներ 25էն պակաս ըլլալու չեն:

Ե) 12 տեսակ գեղեցիկ ծաղկաւոր խաչեր, Ս. Գրական խաչով մը, (Միայն Յիսուս, Իմ շնորհքս հերիք է քեզի քեզ յաւիտեանական սիրով սիրեցի, Մինչեւ ի մահ հաւատարիմ եղիր, Զանքի մէջ Թուխտիրտ ջրլաք եւայն):

Գին իւրաքանչիւրը 50 սանթ, կամ 3 սէնթ:
Թղթատարով ապսպրանքներ 25 էն պակաս ըլլալու չեն:

Զ) ՊԱՏԻ ԵՄՂԿԵՊԱՏԿԵՐՆԵՐ

ա. Զորս տեսակ: Մեծութիւն՝ 27 սմմ. երկ. 20 սմմ. լայն
Վրայի Ս. Գրական համարներն են, 1) Յիսուայ Ի. 15, 2) Գառ. Ե. 22, 23. 3) Կող. Գ. 4, 4) Ա. Կորնթ. Ժ. 57:

բ. երկու տեսակ ձուածեւ ծաղկեպատկերներ: Մեծութիւնը 27 սմմ. երկ. 16 սմմ. լայն: Վրայի Ս. Գրական համարներն են, 1) Ա. Յով. Ա. 7, 2) Յայտ. Բ. 10:

Գին՝ իւրաքանչիւրը 3 ֆր. թղթ. ծախքով 3, 50:

գ) երկու պատկերներ: Մեծութիւն՝ 33 սմմ. երկ. 23 սմմ. լայն:

1) Մեր քաղաքականութիւնը. Սր. Գրական համարներ՝ Փիլ. Գ. 20 եւ երբ. Ժ. 13, 14: Եթ Լոյս տունը վերն հոգոյս բնակարանը կը գոյ:

2) Սպասող ծառան: Նոյն մեծութեամբ: Սր. Գրական համար՝ Գառ. Ժ. 36: Եթ առ դէմ Փրկիչ Տէրոջ հետ կը գոյ:

Գին՝ իւրաքանչիւրը 4 ֆր. թղթ. ծախքով 4, 50